«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բանկային և առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններ

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բանկային և առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններ

Խմբագրություն 5

ԲԱԺԻՆ 1. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1 Եթե այլ բան չի նշված կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում, սույն կանոններում օգտագործվող տերմիններն ու սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունը.

«Կանոններ» - «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության հայտարարած (հրապարակած) բանկային և առարկազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման սույն հիմնական (ընդհանուր) կանոնները, որը բոլոր հաճախորդների համար համարվում է հրապարակային ստանդարտ ձև և սահմանում է հաճախորդներ կողմից բանկային և առարկազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հրապարակային ստանդարտ պայմաններն ու կարգը, բանկային և առարկայազուրկ մետաղական հաշվի պայմանագրի դրույթները, ինչպես նաև կարգավորում է բանկային և առարկայազուրկ մետաղական հաշվի բացման հետ կապված կողմերի միջև ծագած հարաբերությունները (ներառյալ պայմանագրային): Բանկային և առարկազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման պայմանները հաստատվում են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲ ընկերության իրավասու մարմնի կողմից և հրապարակվում են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲ ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում www.amiobank.am հասցեով, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲ ընկերության գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում:

«Բանկ» - «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն:

«Հաճախորդ» - Բանկի հետ հաշվի պայմանագիր կնքած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ կամ նոտար, ռեզիդենտ իրավաբանական անձ և ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր:

«Կողմեր» - Բանկը և Հաճախորդը միասին:

«Հաշվի պայմանագիր (Պայմանագիր)» - Հաճախորդի կողմից սույն Կանոններին ամբողջությամբ միանալու միջոցով Բանկի հետ կնքված հրապարակային պայմանագիր, որի համաձայն Բանկը պարտավորվում է Հաճախորդի համար բացել բանկային և(կամ) առարկայազուրկ մետաղական հաշիվ(ներ) և այդ հաշիվներով իրականացնել օրենքով, իրավական այլ ակտերով, սույն կանոններով նախատեսված գործառնությունները:

Սույն կանոնները կիրառվում են այն Հաճախորդների նկատմամբ, ովքեր դիմում են Բանկին՝ բանկային և(կամ) առարկայազուրկ մետաղական հաշիվ(ներ) բացելու նպատակով, վերջինիս կողմից հայտարարած (հրապարակած) պայմաններով և սակագներով:

Կանոններին միանալու դիմում-պայմանագիրը, սույն Կանոնները, բանկային և առարկազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման պայմաններն ու սակագները միասին համարվում են Հաշվի պայմանագիր՝ որպես մեկ ամբողջական փաստաթուղթ:

«Էլեկտրոնային բանկային սպասարկում» - Հաճախորդի բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկում, որը սահմանում է Բանկի և Հաճախորդի միջև էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման կարգը (կանոնները), այդ թվում Հաճախորդի կողմից բանկային հաշվով գործառնություններ կատարելու համար կարգադրությունները, այլ փաստաթղթերը Բանկին փոխանցելու կարգը, բանկային հաշվի քաղվածքները, բանկային հաշվի և էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի օգտագործմամբ բանկային հաշվով գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները Հաճախորդի կողմից ստանալու կարգը:

«Դիմում-պայմանագիր (Դիմում)» - Բանկի՝ հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններին միանալու մասին դիմում, որը կազմվել է Հաճախորդի կողմից Բանկի սահմանած (որոշած) օրինակելի ձևով և ներկայացվել է Բանկ՝ Հաշվի պայմանագիր (պայմանագրեր) կնքելու նպատակով:

«Հաշվի փակման դիմում» - դիմում, որը կազմվել է Հաճախորդի կողմից և ներկայացվել է Բանկ՝ Հաշվի պայմանագիրը (պայմանագրերը) լուծելու նպատակով:

«Սպասարկող ստորաբաժանում» - Բանկի ստորաբաժանում (այդ թվում՝ Բանկի առանձնացված (տարածքային) ստորաբաժանում), որտեղ կարող են ներկայացվել բանկային և(կամ) առարկայազուրկ մետաղական հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, և որում կատարվում է հաշվի սպասարկումը:

«Էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգ (Համակարգ)» - էլեկտրոնային բանկային սպասարկման կորպորատիվ տեղեկատվական համակարգ, որը հանդիսանում է «բանկ-հաճախորդ», «ինտերնետ-բանկ», «մոբայլ-բանկ» և այլ էլեկտրոնային տիպի փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի տարատեսակ և իրենից ներկայացնում է ընդհանուր հեռահաղորդակցության միջոցներով էլեկտրոնային փաստաթղթերի ստեղծման, պաշտպանման, Էլեկտրոնային Թվային Ստորագրությամբ վավերացման, փոխանցման և մշակման համար ծրագրային ու տեխնիկական միջոցների և կազմակերպական միջոցառումների համալիր:

«Էլեկտրոնային փաստաթուղթ»- Համակարգի օգնությամբ էլեկտրոնային տեսքով ձևավորված, Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում /այսուհետ՝ Հավելված/ նշված փաստաթղթերից մեկը, որը վավերացված է էլեկտրոնային Թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային Փաստաթղթերի տեսակներն ու նրանց նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են Հավելված 1-ում:

«Էլեկտրոնային թվային ստորագրություն» (ԷԹՍ)- թվային կոդ, որը գեներացվում է գաղտնաբանալու միջոցով կամ ստացվում է բջջային հեռախոսով sms հաղորդագրությունով և օգտագործվում է Բանկ ուղարկվող յուրաքանչյուր էլեկտրոնային փաստաթուղթին կից, վերջինիս նույնականացումն ու իսկությունն ապահովելու համար: Հաճախորդից Համակարգի միջոցով էլեկտրոնային թվային ստորագրությամբ փաստաթղթի ստացումը հանդիսանում է անհրաժեշտ և բավարար պայման փաստաթուղթը վավերացված համարելու համար:

«Գաղտնաբանալի»- սարք, որը գեներացնում է միանգամյա նշանաբաններ՝ Համակարգ մուտք գործելու, ԷԹՍ գեներացնելու և գործարքները /էլեկտրոնային փաստաթղթերը/ հաստատելու համար:

«Էլեկտրոնային սպասարկման Դիմում-պայմանագիր (Դիմում)»- ինտերնետ-բանկ համակարգով բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկման կանոններին միանալու մասին դիմում, որը կազմվել է Հաճախորդի կողմից Բանկի սահմանած (որոշած) օրինակելի ձևով և ներկայացվել է Բանկ՝ Հաշվի էլեկտրոնային սպասարկման պայմանագիր կնքելու նպատակով:

«Հաճախորդի բանկային հաշիվ (Բանկային հաշիվ)» - հաշիվ, որը բացվել է Կողմերի միջև կնքված Բանկային և(կամ) առարկայազուրկ մետաղական հաշվի պայմանագրի հիման վրա, և որով Բանկը պարտավորվել է սույն Կանոններին համապատասխան իրականացնել Հաճախորդի հաշվարկային և դրամարկղային սպասարկումը, որը ներառում է Հաճախորդի բացած հաշվի վրա մուտք եղող դրամական միջոցների մուտքագրումը, հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ Հաճախորդի կարգադրությունների կատարումը:

«Հաճախորդի առարկայազուրկ մետաղական հաշիվ (Մետաղական հաշիվ)» - 999.9 հարգի ոսկով հաշիվ, որը բացվել է Կողմերի միջև կնքված Բանկային և(կամ) առարկայազուրկ մետաղական հաշվի պայմանագրի հիման վրա, նախատեսված է անկանխիկ ոսկու հաշվառման համար, և որով Բանկը պարտավորվել է իրականացնել ՀՀ իրավական ակտերով և սույն Կանոններով նախատեսված գործառնությունները:

«Հաշիվ» - եթե սույն Կանոններով այլ բան չի նշված կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում, ապա Բանկային և/կամ Մետաղական հաշիվ:

«Սակագներ» - ֆիզիկական, իրավաբանական անձանց, անհատ ձեռնակատերերի և նոտարների հաշվարկա-դրամարկղային սպասարկման սակագները, որոնք նախատեսում են Հաշվի սպասարկման համար Բանկի սահմանած վճարների չափերը, այդ թվում՝ Հաշվի բացման և սպասարկման, Հաշվով գործառնություններ կատարելու և Պայմանագրի կատարման ընթացքում այլ գործողությունների իրականացման համար Հաճախորդից գանձվող կոմիսիոն վճարների չափերը, ինչպես նաև Հաշվի սպասարկման և վարման, Հաշվով հաշվարկների (փոխանցումների) իրականացման հետ կապված Բանկի ծառայությունների դիմաց այլ սակագները (նաև ժամանակ առ ժամանակ փոփոխվող սակագները(վճարները):

«Հավելվածներ» - Հաշիվներով գործառնությունների կատարումը կարգավորող գրավոր եղանակով ստեղծված ու հրապարակված ցանկացած փաստաթուղթ, Կողմերի միջև առանձին ձևով կնքված համաձայնագրեր (պայմանագրեր), ներառյալ էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագիր, Դիմում-պայմանագիր, Բանկի կողմից միակողմանիորեն սահմանած պայմաններ ու առանձնահատկություններ:

Եթե այլ բան չի նշված կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում, ապա՝

ա) բաժինների անվանումները օգտագործվում են միայն վկայակոչման նպատակով և չեն սահմանափակում կամ ներգործում նրանց նշանակության վրա.

բ) եզակի թվով սահմանված տերմինները (բառերը) արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը.

գ) որևէ բաժնին, կողմին կամ հավելվածին որևէ հղում համարվում է հղում սույն Կանոնների տվյալ բաժնին կամ կողմին կամ հավելվածին.

դ) ցանկացած անձին վկայակոչումը վերաբերվում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին կամ նրա իրավահաջորդին:

<u>ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ</u>

2.1 Սույն Կանոնները սահմանում են Հաճախորդների Հաշվի բացման և վարման (սպասարկման) կարգն ու պայմանները, և կարգավորում են Հաշվի հետ կապված Կողմերի միջև ծագած այն հարաբերությունները, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50-րդ գլխով (ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50.1. (ՀԱՏՈՒԿ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ) գլխով նախատեսված հատուկ բանկային հաշիվների բացման և վարման (սպասարկման) հետ կապված առանձնահատկությունները կարգավորվում են Բանկի կողմից սահմանած այլ կանոններով, ներքին իրավական ակտերով և հատուկ բանկային հաշվի պայմանագրերով:

2.2 Կանոնները բոլոր Հաճախորդների համար համարվում են տիպային (ստանդարտ ձև) և սահմանում են Բանկի և Հաճախորդի միջև կնքվող Պայմանագրի պայմանները:

Պայմանագիրը կնքվում է քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածին համապատասխան Հաճախորդի կողմից սույն Կանոններին ամբողջությամբ միանալու միջոցով և իրականացվում է Հաճախորդի օֆերտան (Բանկին թղթային եղանակով տրված Կանոններին միանալու Դիմումը, կազմված Բանկի սահմանած օրինակելի ձևով, ստորագրված Հաճախորդի կողմից, իրավաբանական անձանց դեպքում՝ Հաճախորդի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի (անձանց) կողմից, կնքված Հաճախորդի կնիքով (Հաճախորդի ցանկությամբ) Բանկի կողմից ակցեպտավորելու (Հաճախորդի կողմից Բանկին թղթային եղանակով տրված Կանոններին միանալու Դիմումում Բանկի կողմից Հաշիվ բացելու մասին նշագրումը) միջոցով: Պայմանագրի կնքման ամսաթիվ է համարվում Բանկի կողմից Հաշիվ բացելու մասին նշագրման ամսաթիվը: Պայմանագրի կնքման փաստի հաստատման նպատակով Հաճախորդին կարող է տրվել Հաշվի բացման մասին հաղորդագրություն:

2.2.1 Կանոններին միանալու Դիմում-պայմանագրի օրինակելի ձևերը սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն: Բանկի կողմից Կանոններին միանալու Դիմումի օրինակելի ձևում փոփոխությունների կատարումը չի համարվում Բանկի կողմից Պայմանագրի պայմանների միակողմանի փոփոխություններ: Կանոններին միանալու Դիմումի օրինակելի ձևը Պայմանագիր կնքելու մտադրություն ունեցող Հաճախորդներին տրամադրվում է սույն Կանոնների 2.4-րդ կետով նախատեսված կարգով հրապարակելու միջոցով:

2.2.2 Այն դեպքում, երբ Հաճախորդը Կանոններին միանալու Դիմումով խնդրել է Բանկին բացել մի քանի Հաշիվներ, ապա Կանոններին միանալու այդպիսի Դիմումը Կողմերի կողմից ճանաչվում է մի քանի Պայմանագրեր (Կանոններին միանալու Դիմումում նշված Հաշիվների քանակով) կնքելու մի քանի օֆերտա պարունակող Կանոններին միանալու Դիմում: Այդպիսի օֆերտայի Բանկի ակցեպտը համարվում է Կանոններին միանալու Դիմումում նշված Հաշիվների քանակով Պայմանագրեր կնքելու ակցեպտ:

Հաճախորդի հետ միաժամանակյա գործող Պայմանագրերի քանակը չի սահմանափակվում:

Եթե Դիմում-պայմանագրում նշված են Հաշվով սահմանափակ գործառնությունների իրականացում, ապա կարող են իրականացվել բացառապես այն գործառնությունները, որոնք նշված են Դիմում-պայմանագրում:

2.3 Հաճախորդի Հաշվով սպասարկումն իրականացվում է համաձայն ՀՀ գործող օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, դրանց համապատասխան բանկային կանոնների (Բանկի կանոնների), բանկային բնագավառում կիրառվող գործարար շրջանառության սովորույթների, միջազգային պրակտիկայում օգտագործվող կանոնների, ինչպես նաև սույն Կանոնների: Օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների դեպքերում, սույն Կանոնները, մինչև դրանցում համապատասխան փոփոխությունների կատարումը, կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում օրենսդրությանը, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

2.4 Բանկը, Հաճախորդների կողմից սույն Կանոններին և Սակագներին ծանոթանալու նպատակով, սույն Կանոնները (այդ թվում Կանոններում կատարված փոփոխություններն ու լրացումները) և Սակագները իր հայեցողությամբ հրապարակում է տեղեկատվության այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տեղեկություններին: Ըստ այդմ էլ Բանկը Կանոններին և Սակագներին վերաբերելի տեղեկությունները հրապարակում է՝

ա) Բանկի կորպորատիվ www.amiobank.am ինտերնետային կայքէջի միջոցով.

բ) Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկում իրականացնող այլ ստորաբաժանումներում առկա տեղեկատվական վահանակներում հայտարարությունների տեղադրման միջոցով.

գ) Հաճախորդների էլեկտրոնային փոստային հասցեներով ուղարկելու միջոցով.

դ) Էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի միջոցով (եթե Բանկի և Հաճախորդի միջև կնքվել է Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագիր).

ե) այլ միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին ստանալու և հավաստիանալու, որ տվյալ տեղեկությունները ուղարկվել է Բանկից:

Բանկն իր բացառիկ հայեցողությամբ տեղեկությունները հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

2.5 Սույնով Հաճախորդը համաձայնվում և ընդունում է, որ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային պայմանագրերով, կոնվենցիաներով, օրենքներով, իրավական ակտերով (ներառյալ միջազգային) սահմանված դեպքերում Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում Հաճախորդին կամ նրա հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխկապակցված անձանց, խորհրդատուներին, խորհրդականներին և աշխատակիցներին ընդգրկելու, Հայաստանի Հանրապետության կամ որևէ այլ պետության լիազոր մարմնի կողմից հրապարակած ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում ընդգրկվելու դեպքերում, կամ Հաճախորդի նկատմամբ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով քրեական գործ հարուցելու, կամ դրա շրջանակներում վերահսկող և քրեական հետապնդում իրականացնող մարմինների (ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների) կողմից Բանկին պահանջներ ներկայացվելու դեպքում Բանկն իրավունք ունի կասեցնել Հաշվով գործառնությունների կատարումն այնքան ժամանակ, քանի դեռ Բանկին հայտնի չի դարձել կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալու մասին:

2.6 Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդին՝ Հաշվի պայմանագիր կնքելուց և Բանկային հաշիվ և(կամ) Մետաղական հաշիվ բացելու ու դրանով պայմանավորված համապատասխան գործառնություններ կատարելուց, եթե Հաճախորդը Բանկին չի տրամադրել անձնական տվյալների հարցման համաձայնություն:

2.7 Կարգավորող օրենք - Պայմանագիրը (ներառյալ Հավելվածները) կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ նյութական օրենքներով: Այն բոլոր հարաբերությունները կամ հարցերը, որոնք կարգավորված չեն Պայմանագրով, կարգավորվում և լուծվում են ՀՀ օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Բանկային հաշվի բացումը ու սպասարկումն իրականացվում է օրենսդրությանը և սույն Կանոններին համապատասխան:

Բանկն իրավունք ունի հրաժարվել Պայմանագիր կնքելուց և մերժել Հաշիվ բացելը միայն օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Բանկը պարտավորվում է իրականացնել Հաճախորդի հաշվարկային և դրամարկղային սպասարկումը, որը ներառում է Հաճախորդի բացած հաշվի վրա մուտք եղող դրամական միջոցների մուտքագրումը, հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ Հաճախորդի կարգադրությունների կատարումը:

3.2 Բանկը Հաճախորդի համար բացում է Բանկային հաշիվ, եթե՝

- Հաճախորդը Բանկին ներկայացրել է Բանկային հաշվի բացման և վարման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, և
- Բանկում բացակայում է Բանկային հաշվի բացմանը խոչընդոտող պետական իրավասու և այլ մարմինների որոշումները:

3.3 Բանկային հաշիվը բացվում է այն արժույթով, որը Հաճախորդը նշել է միանալու մասին դիմումում: Արժույթները, որով կարող է բացվել Բանկային հաշիվը, և համապատասխան արժույթով բացված Բանկային հաշվով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում են Բանկի կողմից միակողմանիորեն:

3.4 Բանկային հաշվի համարը սահմանվում է Բանկի կողմից ինքնուրույնաբար և կարող է փոփոխվել Բանկի կողմից միակողմանիորեն օրենսդրությամբ և ՀՀ կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

3.5 Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատեր Հաճախորդի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու՝ անձանց իրավունքները հավաստվում է ստորագրությունների նմուշների և/կամ կնիքի դրոշմի (Հաճախորդի ցանկությամբ) քարտը (հետայսու տեքստում՝ Ստորագրությունների քարտ), ինչպես նաև օրենքով, դրան համապատասխան բանկային կանոններով ու Պայմանագրով նախատեսված փաստաթղթերը Բանկին ներկայացնելու միջոցով: Քանի դեռ Հաճախորդը Բանկին չի ներկայացրել Ստորագրությունների նոր քարտ, գործող Ստորագրությունների քարտը համարվում է միակ գործող փաստաթուղթը, որի հիման վրա իրականացվում են Բանկային հաշվով գործառնություններ:

Այն դեպքերում, երբ Հաճախորդը Բանկին ներկայացնում է իր անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու լիազորված անձանց վերաբերյալ հակասական տեղեկություններ, որոնք հիմնված են Հաճախորդի կառավարման իրավասու մարմնի որոշումների, հրամանների վրա, և որոնք չեն համընկնում Հաճախորդի կողմից ներկայացված Ստորագրությունների քարտում նշված լիազորված անձանց հետ, Բանկը Հաճախորդի Բանկային հաշվով իրականացնում է գործառնություններ, ընդունում է հաշվարկային, դրամարկղային փաստաթղթեր և այլ կարգադրություններ, Բանկային հաշվի վերաբերյալ հարցումները միայն այն անձանց ստորագրություններով, որոնց իրավունքները Հաճախորդը հավաստել է օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, դրանց համապատասխան բանկային կանոններով և Բանկի ներքին կանոններով նախատեսված փաստաթղթերը Բանկին ներկայացնելու միջոցով, ներառյալ՝ Ստորագրությունների քարտով:

Այն դեպքերում, երբ Հաճախորդի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու լիազորված անձինք ժամանակավորապես չեն կարող իրականացնել իրենց լիազորությունները, Բանկը Բանկային հաշվով գործառնություններն իրականացնում է Հաճախորդի օրենքին համապատասխան գրավոր հասարակ ձևով ձևակերպված լիազորագրի հիման վրա՝ դրանում նշված ժամկետի ընթացքում, կամ հրամանի, որոշման հիման վրա:

Ամեն դեպքում, Բանկը կասեցնում է Բանկային հաշվով գործառնությունների իրականացումը, եթե հակասություններ կան Հաճախորդի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու Բանկում գտնվող լիազորված անձանց միջև: Կասեցումը վերացվում է այդ հակասությունները վերանալու դեպքում:

3.6 Հաճախորդը տնօրինում է Բանկային հաշվում եղած դրամական միջոցներն առանց սահմանափակման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում Բանկային հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելու կամ Բանկային հաշվով գործառնությունները դադարեցնելու կամ օրենքով կամ սույն Կանոններով, Հավելվածներով նախատեսված Բանկային հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու ուղղությունների, պայմանների սահմանափակման այլ միջոցներ կիրառելու դեպքերի:

Բանկային հաշիվների տեսակները սահմանվում են Բանկի կողմից միակողմանիորեն:

3.7 Բանկը Բանկային հաշվից դրամական միջոցները դուրս է գրում Հաճախորդի Բանկային հաշվում եղած դրամական միջոցների սահմաններում:

Բանկային հաշվին ներկայացվող կարգադրությունները Բանկն ընդունում է կատարման անկախ դրանցում նշված դրամական գումարների չափերից և Բանկային հաշվում դրամական միջոցների առկայությունից, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի միջև կնքված առանձին համաձայնագրով կամ սույն Կանոններով:

Բանկային հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է բանկային հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Բանկային հաշվում եղած դրամական միջոցները բավարար լինելու փաստը որոշվում է Բանկի կողմից՝ դրամական միջոցների փոխանցումների իրականացումը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով կամ Բանկի ու Հաճախորդի միջև կնքված առանձին համաձայնագրով:

Եթե Հաճախորդի կարգադրությունները և նրան ներկայացված բոլոր պահանջները բավարարելու (կատարելու) համար Բանկային հաշվում եղած դրամական միջոցները բավարար չեն, ապա Բանկի կողմից Հաճախորդի կարգադրությունները կարող են ընդունվել կատարման և դրվել հերթի՝ ժամանակին չկատարված կարգադրությունների շարքում: Այդպիսի կարգադրությունները Բանկի կողմից կատարվում են սույն Կանոններով նախատեսված ժամկետներում՝ օրենսդրությամբ սահմանված դրամական միջոցների դուրսգրման հաջորդականությանը համապատասխան:

Եթե Բանկային հաշվով գործառնություններ կատարելուն խոչընդոտում են պետական իրավասու և այլ մարմինների որոշումները, ապա Հաճախորդի կարգադրությունները (այդ թվում չկատարված կարգադրությունների շարքում գտնվող), որոնց վրա տարածվում են այդ որոշումները, դրվում են գործառնություններ իրականացնելուն սպասող չկատարված կարգադրությունների շարքում: Այդպիսի կարգադրությունների կատարումը Բանկի կողմից իրականացվում է գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և հաջորդականությամբ Բանկային հաշվով գործանություններ կատարելու համար թույլտվություն ստանալուց կամ սահմանափակումները վերանալուց հետո:

3.7.1 Այն դեպքերում, երբ Հաճախորդը ցանկանում է Բանկային հաշվից վճարում (փոխանցում) կատարել, չնայած դրանում դրամական միջոցների բացակայությանը կամ անբավարարությանը, Բանկը կարող է Հաճախորդի Բանկային հաշիվը վարկավորել՝ տրամադրելով օվերդրաֆտ՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված առանձին համաձայնագրով (պայմանագրով) նախատեսված կարգով ու պայմաններով:

3.8 Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով, Հավելվածներով կամ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրերով, ապա Բանկը բանկային հաշվից դրամական միջոցներ դուրս է գրում՝

- Հաճախորդի վճարման հանձնարարականների, դրամարկղային փաստաթղթերի և այլ կարգադրությունների հիման վրա.
- ինկասո հանձնարարականների և առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) օրենքի ուժով Բանկային հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու լիազորություններ (իրավասություններ) ունեցող անձանց և(կամ) մարմինների (բռնագանձում իրականացնող) կողմից Բանկային հաշվին ներկայացված այլ կարգադրությունների հիման վրա.
- ինկասո հաշվարկների դեպքում դրամական միջոցներ ստացողի կողմից Բանկային հաշվին ներկայացվող ինկասո հանձնարարականների հիման վրա.
- վճարման պահանջագրերի և ստացողի պահանջներով դրամական միջոցների փոխանցման հաշվարկների իրականացման դեպքում դրամական միջոցներ ստացողի կողմից Բանկային հաշվին ներկայացվող Բանկի սահմանած ձևով կազմված այլ կարգադրությունների (ուղիղ դեբետագրում) հիման վրա.
- Բանկի տրամադրած չեկային գրքույկի (չեկերի ձևաթղթերի) վրա կազմված և գործող օրենսդրությամբ, սույն Կանոններով սահմանված պարտադիր վավերապայմաններ պարունակող Հաճախորդի դուրս գրած չեկի հիման վրա.
- հաշվարկային փաստաթղթերի և Բանկի այլ կարգադրությունների, այդ թվում, բայց ոչ ներառյալ առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) գործող օրենսդրությանը, ՀՀ կենտրոնական բանկի նոմատիվ իրավական ակտերին և սույն Կանոններին համապատասխան Հաճախորդի կամ այլ անձանց կարգադրությունների հիմքով կազմված Բանկի կարգադրությունների հիման վրա:

Այն կարգադրությունները (հանձնարարականները), որոնց համար իրավական ակտերով սահմանված չեն պարտադիր վավերապայմաններ և ձևեր, պետք է կազմված լինեն Բանկի կողմից սահմանված ձևերով:

Վերը նշված փաստաթղթերը Բանկն ընդունում է կատարման, եթե դրանք կազմված են գործող օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված պահանջներին համապատասխան:

Բանկային հաշվով գործառնություններ իրականացնելու համար կարգադրությունների (հանձնարարականների) ցանկը սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն:

3.8.1 Եթե Բանկային հաշվին ներկայացված Հաճախորդի կարգադրության (հանձնարարականի)՝ կազմված Բանկի սահմանած ձևով, հիման վրա դուրս են գրվում դրամական միջոցներ՝ արտարժույթի փոխարկման

գործարքներ իրականացնելու համար, ապա արտարժույթի փոխարկման գործարքներն իրականացվում են դրամական միջոցների դուրս գրման օրվա դրությամբ Բանկի սահմանած փոխարժեքներով:

3.9 Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով, Հավելվածներով կամ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրերով, ապա Բանկը Հաճախորդի Բանկային հաշվին դրամական միջոցները մուտքագրում է դրամարկղային, հաշվարկային փաստաթղթերի և դրամական միջոցների փոխանցման այլ կարգադրությունների (հանձնարարականների) հիման վրա:

Եթե Բանկային հաշվին փոխանցվել են դրամական միջոցներ, որոնք տարբերվում են Բանկային հաշվի արժույթից, ապա Բանկը Բանկային հաշվին մուտքագրում է դրան համարժեք գումար՝ հաշվարկված Բանկի կողմից անկանխիկ գործարքների համար տվյալ գործառնության իրականացման օրվա դրությամբ սահմանած փոխարժեքով:

3.10 Բանկն ինքնուրույն է սահմանում գործառնական օրվա տևողությունը, որի ընթացքում Սպասարկող ստորաբաժանումն իրականացնում է Բանկային հաշվին ներկայացվող հաշվարկային, դրամարկղային և այլ փաստաթղթերի ու կարգադրությունների (հանձնարարականների) ընդունումը (հետայսու տեքստում՝ «Գործառնական օր»):

3.11 Բանկային հաշվով գործառնություններ իրականացնելու Հաճախորդի և այլ անձանց կարգադրությունները (հանձնարարականները), որոնք Բանկին են ներկայացվել Գործառնական օրվա ընթացքում, Բանկը կատարման է ընդունում ընթացիկ Գործառնական օրվա ընթացքում:

Բանկային հաշվով գործառնություններ իրականացնելու Հաճախորդի և այլ անձանց կարգադրությունները (հանձնարարականները), որոնք Բանկին են ներկայացվել Գործառնական օրվա ավարտից հետո, Բանկը կատարման է ընդունում հաջորդ Գործառնական օրվա ընթացքում:

Բանկի և Հաճախորդի միջև Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագիր կնքվելու դեպքում հաշվով գործառնություններ իրականացնելու Հաճախորդի կարգադրությունները (հանձնարարականները) Բանկի կողմից ընդունվում են Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով;

Կարգադրությունները (հանձնարարականները) կատարման ընդունելու, հետկանչելու, վերադարձնելու (չեղարկելու) կարգը (ընթացակարգը) սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն և Բանկի ընտրությամբ Հաճախորդին հասանելի է դարձվում սույն Կանոնների 2.4-րդ կետում նշված միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

3.12 Հաճախորդի Բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրումն իրականացվում է Բանկի կողմից սահմանված կարգով, ոչ ուշ, քան դրամական միջոցները կամ համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, պայմանով, որ սահմանված ժամկետում Բանկը ստացել է պատշաճ ձևով կազմված փաստաթղթերը, որոնցից միանշանակ հետևում է, որ դրամական միջոցներ ստացողը Հաճախորդն է և դրանք պետք է մուտքագրվեն Հաճախորդի Բանկային հաշվին: Միաժամանակ, եթե այլ բան սահմանված(նախատեսված) չէ գործող օրենսդրությամբ, սույն Կանոններով, Հավելվածներով կամ Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (Պայմանագրով), թույլատրվում է Հաճախորդի Բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրումը երկու վավերապայմաններով, որոնք սահմանվում են Բանկի կողմից միակողմանիորեն և Բանկի ընտրությամբ Հաճախորդին հասանելի է դարձվում սույն Կանոնների 2.4-րդ կետում նշված միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

Եթե Բանկի ստացած վճարային փաստաթուղթը հնարավորություն չի տալիս միանշանակ որոշելու դրամական միջոցներ ստացող Հաճախորդին (օրինակ, փաստաթուղթը պարունակում է Հաճախորդի աղավաղված կամ ոչ ճիշտ անվանումը, Բանկային հաշվի համարը և այլն), ապա դրամական միջոցները մուտքագրվում են Հաճախորդի հաշվին միայն գործող օրենսդրությանը, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան Բանկի կողմից նախատեսված կարգով և ժամկետներում դրամական միջոցներ ստացողին պարզելուն ուղղված միջոցառումներն իրականացումից հետո:

3.13 Բանկը Հաճախորդի կարգադրությամբ (հանձնարարականով) Բանկային հաշվից կանխիկ դրամական միջոցներ է տրամադրում (եթե Հաշվից կանխիկ դրամական միջոցներ տալը արգելված չէ օրենսդրությամբ) կամ անկանխիկ փոխանցում է կատարում ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, ինչպես նաև օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված (նախատեսված) դեպքերում Հաճախորդի կողմից Բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման գործառնություններ իրականացնելու համար Բանկին ներկայացված պատշաճ ձևով կազմված այլ փաստաթղթերի հիման վրա: Նշված գործառնությունները Բանկի հայեցողությամբ կարող են իրականացվել ավելի կարճ ժամկետներում՝ Բանկի կողմից նախատեսված կարգով և պայմաններով, այդ թվում՝ Սակագներով:

3.14 Բանկը Հաճախորդի բանկային հաշվից կանխիկ դրամական միջոցներ է տրամադրում Հաճախորդի հայտի հիման վրա, իսկ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումար կանխիկ ստանալու համար Հաճախորդը 1 (մեկ) օր առաջ մինչև ժամը 14:00 բանավոր տեղեկացնում կամ գրավոր հայտ է ներկայացնում Բանկի գլխամասային գրասենյակ կամ մասնաճյուղեր:

3.15 Բանկը Իրավաբանական անձ և Անհատ ձեռնարկատեր Հաճախորդի Բանկային հաշվից կանխիկ դրամական միջոցներ կարող է տրամադրել ինչպես չեկային գրքույկի (չեկերի ձևաթղթերի) հիման վրա, այնպես էլ առանց դրանց: Դիմում-պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ժամանակ Հաճախորդին է հանձնվում

Չեկային գրքույկ: Բանկը Հաճախորդի Բանկային հաշվից կանխիկ գումարների տրամադրումը իրականացնում է անվանական չլիմիտավորված բանկային չեկերով, եթե այլ բան չի սահմանվում լրացուցիչ համաձայնությամբ:

Չեկային գրքույկի միջոցով Հաշվի սպասարկման համար Բանկը Հաճախորդից գանձում է համապատասխան վճար՝ Սակագներով նախատեսված չափերով, և հետագայում չեկային գրքույկի միջոցով Հաշվի սպասարկումից Հաճախորդի հրաժարումը հիմք չէ վճարված վճարները վերահաշվարկելու կամ հետ վերադարձնելու համար:

Չեկով Հաճախորդի հաշվից կանխիկ դրամական միջոցները վճարվում են հետևյալ ժամկետներում՝

ա) չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքում, պետք է վճարման ներկայացվի Բանկին տասը օրացուցային օրվա ընթացքում,

բ) չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, պետք է վճարման ներկայացվի Բանկին երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

Սույն ժամկետները կիրառելի չեն չեկային գրքույքով Հաշվից կանխիկ դրամական միջոցներ տրամադրելու նկատմամբ:

Ընդ որում՝ չեկի վճարման սույն ժամկետները գործում են, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ չեկերով հաշվարկներ իրականացնելու գործառնությունների կանոնակարգման ընթացքում:

Բանկը չեկը վճարում է Հաճախորդի սույն Կանոններին համապատասխան բացված մեկ կամ մի քանի հաշիվներում առկա միջոցներից:

Օրենսդրությամբ սահմանված վավերապայմանների պահպանմամբ Հաճախորդի տրամադրած և Բանկին վճարման ներկայացված չեկերը չվճարելու դեպքում Բանկը կրում է պատասխանատվություն, օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.16 Բանկային հաշվից դրամական միջոցների փոխանցման Բանկի պարտավորությունը Հաճախորդի հանդեպ համարվում է պատշաճ կատարված՝

- ստացողի դրամական միջոցները սպասարկող օպերատորի թղթակցային հաշվին համապատասխան գումարի չափով դրամական միջոցների մուտքագրման պահից, եթե դրամական միջոցները փոխանցվում են Բանկի հաճախորդ չհանդիսացող ստացողի հաշվին, կամ

- ստացողի Բանկում բացված բանկային հաշվին համապատասխան գումարի չափով դրամական միջոցների մուտքագրման պահից, եթե դրամական միջոցները փոխանցվում են Բանկի հաճախորդի հասցեով:

Եթե արտարժույթով դրամական միջոցների փոխանցման ժամկետը արտարժույթի էմիտենտ-պետությունում, որտեղ բացված է բանկային հաշիվը, համարվում է ոչ աշխատանքային օր, ապա վերը նշված դրամական միջոցների փոխանցումը Բանկի կողմից իրականացվում է այդ պետությունում հաջորդ աշխատանքային օրը:

Բանկային հաշվից դրամական միջոցներ տալու Բանկի պարտավորությունը Հաճախորդի հանդեպ համարվում է պատշաճ կատարված Բանկի դրամարկղից դրամարկղային չեկում նշված գումարի չափով դրամարկղային չեկում նշված Հաճախորդի լիազորված անձին համապատասխան գումարի չափով դրամական միջոցներ տալու, իսկ դրամական միջոցներն ինկասացնելու մասին համաձայնագիր (պայմանագիր) առկայության դեպքում՝ դրամական միջոցները ինկասացիոն կազմակերպությանը հանձնելու պահից:

3.17 Բանկի կողմից Հաճախորդի Բանկային հաշվին սխալմամբ մուտքագրված դրամական միջոցները, ինչպես նաև սույն Կանոններով, Հավելվածներով և Սակագներով նախատեսված Բանկի ծառայությունների վճարները, Բանկային հաշվով գործառնությունների իրականացման համար Բանկի կատարած ծախսերը (հետայսու տեքստում՝ «Կոմիսիոն վարձատրություններ»), ներառյալ սույն Կանոններով նախատեսված տուժագումարներն ու այլ դրամական պատժամիջոցները, ինչպես նաև սույն Կանոններով և Սակագներով Բանկի հանդեպ Հաճախորդի ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով Բանկի կողմից անակցեպտ կարգով սույն Կանոններով նախատեսված ժամկետներում դուրս են գրվում Հաճախորդի Բանկային հաշվից առանց վերջինիս լրացուցիչ կարգադրության (համաձայնության)՝ Բանկի հաշվարկային և այլ փաստաթղթերի հիման վրա:

3.17.1 Միանալով սույն Կանոններին Հաճախորդը դրանով իսկ նախապես համաձայնվում է սույն Կանոնների 3.17 կետում նշված դեպքերում Բանկի հաշվարկային և այլ փաստաթղթերի հիման վրա Բանկային հաշվից դրամական միջոցների դուրսգրմանը՝ Բանկի հաշվարկային փաստաթղթերի և այլ կարգադրությունների մասնակի կատարման հնարավորությամբ:

3.18 Բանկի և Հաճախորդի միջև կնքված վարկային (ներառյալ վարկային գծի, օվերդրաֆտի), երաշխավորության, գրավի, բանկային երաշխիքի և այլ պայմանագրերով (համաձայնագրերով), ինչպես նաև Հաճախորդի նկատմամբ հետադարձ (ռեգրեսային) պահանջներով Բանկին հասանելիք դրամական միջոցները Բանկն անակցեպտ կարգով (առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (հանձնարարության) դուրս է գրում Հաճախորդի Բանկային հաշվից, եթե վերը նշված պայմանագրերում (համաձայնագրերում) առկա է նման եղանակով գանձումներ կատարելու Բանկի իրավունքի վերաբերյալ պայման: Դրամական միջոցների դուրս գրումը կատարվում է վերոհիշյալ պայմանագրերում (համաձայնագրերում) նշված ժամկետներում կամ Բանկային հաշվին դրամական միջոցներ ստացվելուն պես:

3.19 Հաճախորդն իրավունք ունի կարգադրել Բանկին Բանկային հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ Հաճախորդի պարտավորությունների կատարման հետ:

Բանկն ընդունում է այդ կարգադրությունները, պայմանով, որ դրանցում գրավոր նշվեն անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում համապատասխան պահանջը ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

3.20 Բանկային հաշվում առկա դրամական միջոցներն առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) դուրս են գրվում ինկասո հանձնարարությունների հիման վրա հետևյալ դեպքերում.

3.20.1 դրամական միջոցների բռնագանձում իրականացնողների կարգադրությամբ.

3.20.2 Կողմերի միջև կնքված ինկասո հաշվարկների միջոցով բանկային հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու համաձայնագրով(պայմանագրով) նախատեսված կարգով:

3.21 Բանկային հաշվով գործառնությունների վերաբերյալ քաղվածքները և դրանց հավելվածները տրամադրվում են Հաճախորդին Բանկի կողմից նախատեսված կարգով և եղանակներով, իսկ Կողմերի միջև էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ դրանով նախատեսված կարգով և եղանակներով: Բանկային հաշվի քաղվածքների անվճար տրամադրման պարբերականությունը սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն:

3.22 Եթե Հաճախորդին կամ վերջինիս նշած անձին, Հաշվից կանխիկ գումար տրամադրելու համար օգտագործվում է Բանկի տրամադրած չեկային գրքույկը (ձևաթղթերը), ապա կանխիկ դրամ ստանալու նպատակով Հաճախորդը կարող է դուրս գրել անվանական չլիմիտավորված չեկ, որը պետք է լրացված լինի հետևյալ կանոնների համաձայն՝

ա) Չեկը լրացվում է ձեռագիր և առանց ուղղումների: Ուղղումներով Չեկը համարվում է անվավեր և Բանկի կողմից ենթակա չէ ընդունման և վճարման:

բ) Չեկի բոլոր տողերը լրացվում են անմիջապես տողի սկզբից՝ առանց ազատ հատված թողնելու կամ ազատ հատվածը փակվում է [redacted]=[redacted] նշանով:

գ) Չեկը լրացվում է հայերեն: Հայերենի հետ միաժամանակ Չեկը կարող է լրացվել նաև անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

դ) Չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքում, պետք է վճարման ներկայացվի Բանկին տասը օրացուցային օրվա ընթացքում:

ե) Չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, պետք է վճարման ներկայացվի Բանկին երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

զ) «Չեկ տվողի անունը (անվանումը) » տողում լրացվում է իրավաբանական անձի կամ Անհատ Ձեռնարկատիրոջ անվանումը:

է) «Չեկը կազմելու վայրը» տողում լրացվում է Բանկի գլխամասային գրասենյակի կամ մասնաճյուղի գտնվելու քաղաքը, որտեղ Չեկը ներկայացվում է վճարման:

ը) «Հաշվի համարը» տողում լրացվում է այն հաշվեհամարը, որից պետք է իրականացվի դրամական միջոցների կանխիկացում:

թ) «Մասնաճյուղ» տողում լրացվում է Գլխամասային գրասենյակ կամ այն մասնաճյուղի անվանումը, որտեղ Չեկը ներկայացվում է վճարման:

ժ) «Չեկը կազմելու ամսաթիվը» տողում լրացվում է Չեկի դուրսգրման ամսաթիվը տառերով:

ի) «Սույնով հանձնարարում եմ վճարելե տողում լրացվում է գումարը ստացողի անունը, ազգանունը:

լ) «ՀՀ դրամ» տողի դիմաց լրացվում է Չեկի գումարը թվերով:

խ) «Գումարը բառերով» տողում լրացվում է Չեկի գումարը բառերով (առաջին տառը մեծատառով):

ծ) «Ստորագրություն» տողում դրվում է Չեկատուի ստորագրությունը, Հաճախորդի ցանկությամբ նաև կնիքը: Ստորագրություն դրվում է նաև Չեկի դարձերեսին:

կ) «Նպատակ» տողում լրացվում է գործարքի նպատակը և նպատակին համապատասխան գումարի չափը:

Հաճախորդը պատասխանատվություն է կրում սույն կետով սահմանված վավերապայմանների չպահպանման համար:

3.23 Սույն Կանոններում նշված չեկային գրքույկին (չեկերի ձևաթղթերին) վերաբերելի դրույթները կիրառելի են այն Հաճախորդի նկատմամբ, ովքեր ունեն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ:

<u>ԲԱԺԻՆ 4. ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ</u>

4.1. Մետաղական հաշիվը նախատեսվում է անկանխիկ ոսկու հաշվառման համար, որի համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը և չեն նշվում այլ անհատական տվյալներ:

4.2. Մետաղական հաշիվը բացվում է 999.9 հարգի ոսկով:

4.3. Մետաղական հաշվում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ոսկու համար հայտարարած հաշվարկային գնով և կշռային արտահայտությամբ՝ արտահայտված գրամներով՝ 0.01 գրամ

ճշտությամբ կամ տրոյական ունցիաներով՝ 0.001 տրոյական ունցիա ճշտությամբ, ընդ որում մեկ տրոյական ունցիան հավասար է 31.10348 գրամի:

4.4. Բանկի կողմից սահմանվում են 1 գրամ անկանխիկ ոսկու առքի և վաճառքի փոխարժեքներ, որոնք հիմք են ընդունվում հաշվով իրականացվող գործարքներն իրականացնելիս:

4.5. Մետաղական հաշվում անկանխիկ ոսկու նվազագույն քանակը, ինչպես նաև Մետաղական հաշիվը համալրելու նվազագույն քայլը սահմանվում են Սակագներով:

4.6. Մետաղական հաշվով իրականացվում են հետևյալ գործառնությունները.

ա. Մետաղական հաշվի համալրում՝ Բանկից անկանխիկ ոսկի գնելու և այն Մետաղական հաշվին մուտքագրելու միջոցով.
բ. Մետաղական հաշվի համալրում՝ Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա Մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով.
գ. Մետաղական հաշվի ելքագրում՝ հաշվում առկա անկանխիկ ոսկին Բանկին վաճառելու միջոցով.
դ. Մետաղական հաշվի ելքագրում՝ Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա Մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով:

4.7. Մետաղական հաշվով չեն կարող իրականացվել սույն Կանոնների 4.6-րդ կետով սահմանված գործառնություններից բացի այլ գործառնություններ, այդ թվում՝ Մետաղական հաշվի վարկավորում, ինչպես նաև Մետաղական հաշվի համալրում կամ ելքագրում ոչ դրամական միջոցներով:

4.8. Մետաղական հաշիվը կարող է գրավադրվել:

4.9. Սույն Կանոնների 4.6 կետի «ա» կամ «գ» ենթակետերով սահմանված գործառնությունների դեպքում Բանկը Հաճախորդին տրամադրում է անկանխիկ ոսկու առք ու վաճառքի գործառնությունները հաստատող և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վավերապայմանները (տեղեկատվությունը) պարունակող անդորրագիր:

4.10. Բանկը պարտավոր է Հաճախորդի Մետաղական հաշվին մուտք եղող անկանխիկ ոսկին մուտքագրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը:

4.11. Ցպահանջ Մետաղական հաշվի դեպքում Բանկը Հաճախորդի կարգադրությամբ հաշվից անկանխիկ ոսկին ելքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը:

4.12. Ժամկետային Մետաղական հաշվի դեպքում Բանկը Մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին կամ դրա մի մասը ելքագրում է (i) ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր Հաճախորդի առաջին իսկ պահանջով՝ սույն Կանոնների 4.10-րդ կետում սահմանված ժամկետներում, (ii) իրավաբանական անձ Հաճախորդի առաջին իսկ պահանջով՝ 10 օրվա ընթացքում:

4.13. Մետաղական հաշվով տոկոսներ չի վճարվում:

4.14. Մետաղական հաշվից օգտվելու համար ՀՀ դրամով Բանկային հաշվի առկայությունը պարտադիր է:

4.15. <u>Մետաղական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:</u>

<u>ԲԱԺԻՆ 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>

5.1 **Բանկը պարտավոր է՝**

5.1.1 սույն Կանոններով նախատեսված կարգով ու պայմաններով Հաճախորդի համար կատարել տվյալ տեսակի հաշվիների համար օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով, բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով, միջազգային պրակտիկայում ընդունված կանոններով, ինչպես նաև սույն Կանոններով նախատեսված գործառնություններ, բացառությամբ չծածկված ակրեդիտիվով հաշվարկների (եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի միջև կնքված առանձին համաձայնագրով).

5.1.2 Հաշվով գործառնություններն իրականացնել սույն Կանոններով և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով.

5.1.3 առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) Հաշվից դուրս գրել դրամական միջոցներ օրենսդրությամբ և(կամ) սույն Կանոններով սահմանված դեպքերում.

5.1.4 ընդունել և դուրս գրել Հաշվից դրամական միջոցներ օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված կարգով.

5.1.5 Հաճախորդին տրամադրել Հաշվից քաղվածքները և դրանց հավելվածները օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված ժամկետներում և կարգով.

5.1.6 Հաշվի բացման համար սույն Կանոնների 5.3.1-րդ կետին համապատասխան Հաճախորդի ներկայացրած փաստաթղթերը (լուսային պատճենները) պահպանել ոչ պակաս, քան 5 տարի՝ հաշվված Հաշվի պայմանագիրը լուծելու ամսաթվից:

5.2 Եթե Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (պայմանագրով) նախատեսված է Հաշվով գործառնությունների իրականացման առանձնահատկություններ, ապա՝

- սույն Կանոնների 5.1-րդ կետում նշված որոշակի պարտավորություններ կարող են չկատարվել Բանկի կողմից կամ կարող են կատարվել որոշակի առանձնահատկություններով.
- Բանկի վրա կարող են դրվել լրացուցիչ պարտավորություններ:

5.3 **Հաճախորդը պարտավոր է՝**

5.3.1 Հաշվի բացման համար Բանկին ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ Բանկի սահմանած ցանկին համապատասխան.

5.3.2 Հաշվում առկա դրամական միջոցները տնօրինել օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավակա ակտերի և սույն Կանոնների պահանջներին համապատասխան.

5.3.3 ապահովել հաշվարկային և դրամարկղային փաստաթղթերի, այլ կարգադրությունների ճիշտ ձևակերպումները օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի և սույն Կանոնների պահանջներին համապատասխան, և դրանք ներկայացնել Բանկին Գործառնական օրվա ընթացքում, իսկ էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագրի կնքման դեպքում՝ դրանում նշված ժամկետներում և կարգով.

5.3.4 օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կամ սույն Կանոններով սահմանված կարգով ու ժամկետներում Բանկ ներկայացնել վճարողի համաձայնությամբ հաշվարկային փաստաթղթերով Հաշվից դրամական միջոցներ վճարելու համաձայնություն տալու կամ վճարումը մերժելու վերաբերյալ տեղեկություններ.

5.3.5 Հաշվով գործառնությունների համապատասխանությունը օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև արժութային կագավորման և արժութային վերահսկողության մասին, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքների պահանջներին ստուգելու համար ժամանակին Բանկ ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները.

5.3.6 սույն Կանոններով և Սակագներով նախատեսված կարգով ու ժամկետներում Բանկին վճարել Հաշվով գործառնություններ կատարելու համար Կոմիսիոն վարձատրությունները, ինչպես նաև հատուցել Բանկի կրած ծախսերը, որոնք կապված են Հաճախորդի հանձնարարությունները կատարելու, այդ թվում Բանկի այլ սակագներով Հաճախորդի Հաշիվը սպասարկելու հետ.

5.3.7 Հաշվի քաղվածքների և Հաշվով կատարված գործառնությունների հետ առարկությունների դեպքում գրավոր առարկություններ ներկայացնել Բանկին Հաշվի քաղվածքն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում.

5.3.8 հետ վերադարձնել Բանկի կողմից սխալմամբ Հաշվին մուտքագրված դրամական միջոցները՝ այն փոխանցելով Բանկի (Բանկի տարածքային ստորաբաժանման) այն հաշվին, որից այդ դրամական միջոցները մուտքագրվել են Հաշվին, կամ փոխանցել Բանկի պահանջագրում նշված վավերապայմաններով ոչ ուշ քան, 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվված այն պահից, երբ հայտնաբերվել է սխալ մուտքագրման փաստը կամ ստացել է դրա վերաբերյալ Բանկի գրավոր պահանջագիրը.

5.3.9 եթե Հաշվում առկա դրամական միջոցները բավարար չեն սույն Կանոնների 3.17 կետին համապատասխան անակցեպտ կարգով առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու համար, ապա դրա վերաբերյալ Բանկի գրավոր ծանուցումն ստանալուց հետո 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում Բանկին վճարել Սակագներով նախատեսված Կոմիսիոն վարձատրությունը և գրավոր ծանուցման մեջ նշված վավերապայմաններով փոխանցել Հաշվին սխալմամբ մուտքագրված դրամական միջոցները.

5.3.10 Բանկի հետ իրականացնել Հաշվի մնացորդի փոխադարձ ստուգումներ յուրաքանչյուր օրացուցային տարվա հունվարի 1-ի դրությամբ, սակայն ոչ ուշ, քան հունվարի 31-ը.

5.3.11 Իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր Հաճախորդների դեպքում Բանկ ներկայացնել ֆիրմային անվանման, վերակազմակերպման, իրավաբանական հասցեի, գտնվելու վայրի, բնակության կամ հաշվառման վայրերի, կնիքի (Հաճախորդի ցանկությամբ), Հաշվով գործառնություններ իրականացնելու իրավասություններ ունեցող անձանց կազմում կատարված փոփոխությունների վերաբերյալ պատշաճ ձևակերպված փաստաթղթերը Բանկին ներկայացնել ոչ ուշ, քան 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվված այդ փոփոխությունների կատարման(գրանցման) և(կամ) դրանց վերաբերյալ որոշումների ընդունման ամսաթվից:

5.3.12 Հաշվի պայմանագիր կնքելիս Բանկին ներկայացնել կապի արժանահավատ տեղեկություններ (հեռախոսի համար, էլեկտրոնային փոստի հասցե, փոստային հասցե, այլ տեղեկություններ), ինչպես նաև փաստացի գտնվելու կամ բնակության կամ հաշվառման կամ գործունեության վայրերի (եթե այն տարբերվում է Հաճախորդի կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա վայրերից) վերաբերյալ տեղեկություններ, իսկ դրանցում փոփոխություններ կատարվելու դեպքում անհապաղ Բանկին տրամադրել կապի թարմացված տեղեկություններ.

5.3.13 ինկասո հաշվարկների դեպքում ժամանակին գրավոր պատասխանել դրամական միջոցներ ստացողի իրավունքների հաստատման մասին Բանկի հարցումներին.

5.3.14 պատշաճ կարգով կատարել Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (պայմանագրով) Հաշվով գործառնություններն առանձնահատկություններով սպասարկելու համար նախատեսված լրացուցիչ պարտավորությունները:

5.4 Սույն Կանոնների 5.3.7-րդ կետում նշված ժամկետի ընթացքում Հաճախորդի կողմից ստացված Հաշվի քաղվածքը կամ Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ գրավոր առարկություններ չներկայացվելու դեպքում Հաշվով կատարված գործառնությունները և Հաշվում դրամական միջոցների մնացորդը համարվում են Հաճախորդի կողմից հաստատված:

5.5 Սույն Կանոնների 5.3.10-րդ կետում նշված ժամկետում Հաճախորդի կողմից գրավոր հաստատում կամ գրավոր առակություն չստանալու դեպքերում Հաշվի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ համարվում է հաստատված:

ԲԱԺԻՆ 6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

6.1 **Բանկն իրավունք ունի՝**

6.1.1 օգտագործել Հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցները՝ երաշխավորելով այդ միջոցներն անարգել տնօրինելու Հաճախորդի իրավունքը.

6.1.2 օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և դեպքերում միակողմանիորեն փոփոխել Հաշվի համարը.

6.1.3 մերժել Հաճախորդի Հաշվով գործառնությունների կատարումը այն դեպքերում, երբ՝

ա) առկա են փաստեր, որոնք վկայում են Հաճախորդի կողմից հաշվարկային և դրամարկղային փաստաթղթերի ձևակերպումները կարգավորող օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի և բանկային կանոնների պահանջները և դրանք Բանկ ներկայացնելու ժամկետները.

բ) Հաճախորդը Բանկին չի ներկայացրել գործող օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, այդ թվում արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին օրենսդրությամբ սահմանված Հաշվով գործառնությունների իրականացնելու հիմք հանդիսացող փաստաթղթերը, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են Բանկի կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը (փողերի լվացում) և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու նպատակով փաստաթղթային հաշվառման համար.

գ) Հաճախորդը ներկայացրել է այնպիսի հաշվարկային և այլ փաստաթղթեր, որոնցում առկա ստորագրությունները և(կամ) կնիքի դրոշմը կասկածներ է հարուցում.

դ) Հաշվում առկա դրամական միջոցները բավարար չեն Հաճախորդի ներկայացրած հաշվարկային փաստաթղթերի կամ այլ կարգադրությունների կատարման համար, այդ թվում տվյալ գործառնության համար Բանկի կողմից գանձվող Կոմիսիոն վարձատրության հաշվառմամբ, կամ անհնար է թեկուզ մասնակի կատարել հաշվարկային փաստաթղթի կամ Հաճախորդի այլ կարգադրությունները.

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում առկա են Հաշվում առկա դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքների սահմանափակումներ.

զ) Հաճախորդը չի պահպանել կանխիկ դրամական միջոցներ ստանալու համար նախնական հայտեր և հաստատող փաստաթղթեր ներկայացնելու Բանկի կողմից նախատեսված կարգը.

է) Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (պայմանագրով) նախատեսված այլ դեպքերում.

6.1.4 միակողմանիորեն փոփոխել Հաճախորդի հաշվարկա-դրամարկղային սպասարկման Սակագները և այն սակագները, որոնք կապված են Հաշվի սպասարկման ու դրանով գործառնությունների վարման հետ, Կոմիսիոն վարձատրության, պարգևավճարների նոր դրույքներ սահմանելու, փոփոխելու և(կամ) վերացնելու և(կամ) Հաշվի սպասարկման ու վարման, այդ թվում Հաշվով գործառնությունների կատարման հետ կապված Բանկի կողմից մատուցվող ծառայությունների նոր տեսակներ նախատեսելու միջոցով, Հաճախորդին սույն Կանոնների 2.4-րդ կետում նշված եղանակներով ոչ ուշ քան այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց 5 (հինգ) օր առաջ ծանուցելով.

6.1.5 անակցեպտ կարգով առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) Բանկի և(կամ) երրորդ անձանց պահանջներով (կարգադրություններով) Հաշվից դուրս գրել դրամական միջոցներ սույն Կանոններով կամ ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով, դեպքերում և ժամկետներում.

6.1.6 անակցեպտ կարգով առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) փոխարկել Հաշվում առկա դրամական միջոցները այն գումարով, որոնք անհրաժեշտ են Բանկի հանդեպ Հաճախորդի ստանձնած Հաշվի արժույթից տարբերվող արժույթով պարտավորությունները կատարելու համար, և փոխարկման արդյունքում ստացված դրամական միջոցներն ուղղել Բանկի հանդեպ Հաճախորդի ստանձնած

պարտավորությունների կատարմանը, ընդ որում, փոխարկումն իրականացվում է գործարքի կատարման պահին Բանկի սահմանած արտարժույթի առքի կամ վաճառքի փոխարժեքներով, եթե փոխարկման այլ փոխարժեքներ նախատեսված չեն լինի Կողմերի միջև կնքված պայմանագրով (համաձայնագրով) Բանկի հանդեպ Հաճախորդի ստանձնած պարտավորությունների կատարման համար.

6.1.7 ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կամ սույն Կանոններով նախատեսված դեպքերում Հաճախորդին ներկայացնել Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու վերաբերյալ պահանջագրեր (կարգադրություններ).

6.1.8 միակողմանիորեն փոփոխել և լրացնել սույն Կանոնները, այդ թվում՝ նոր խմբագրությամբ հաստատել սույն Կանոնները, Հավելվածները, դրանց մասին Հաճախորդին ծանուցելով սույն Կանոնների 10.2-րդ կետին համապատասխան.

6.1.9 կասեցնել Հաճախորդի Հաշվով գործառնությունները և միջոցներ ձեռնարկել Հաճախորդի կողմից իրականացվող կասկածելի գործարար հարաբերություններն ու գործարքները բացահայտելու և կանխելու ուղղությամբ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքով, երրորդ երկրների կողմից սահմանված պատժամիջոցների պահանջներով (ուժով) և Բանկի ներքին իրավական ակտերով (Բանկի կառավարման կոլեգիալ կամ միանձնյա մարմնի (խորհուրդ, վարչություն, վարչության նախագահ) կողմից ընդունված այն իրավական ակտերը (կարգ, կանոնակարգ, ընթացակարգ, հրահանգ, հրաման և պարտադիր կատարման ենթակա այլ ակտեր), որոնք կարգավորում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասով Բանկի և հաճախորդների հարաբերությունները) սահմանված կարգով ու դեպքերում.

6.1.10 Հաշվի պայմանագրով ժամկետից շուտ կատարել պարտավորությունը:

6.2 **Հաճախորդն իրավունք ունի՝**

6.2.1 տնօրինել Հաշվում առկա դրամական միջոցները, այդ թվում գործող օրենսդրությանը և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան Հաշվից ստանալ կանխիկ դրամական միջոցներ սույն Կանոններով նախատեսված կարգով, իսկ Բանկի կողմից Բանկային հաշվի վարկավորման՝ օվերդրաֆտ տրամադրելու, դեպքերում տնօրինել դրամական միջոցները Կողմերի միջև կնքված բանկային հաշվի վարկավորման (օվերդրաֆտի) պայմանագրով և սույն Կանոններով նախատեսված կարգով և դեպքերում.

6.2.2 ինքնուրույն ընտրել օրենսդրությամբ և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված անկանխիկ հաշվարկների ձևերը.

6.2.3 սույն Կանոններով նախատեսված կարգով ստանալ Հաշվի վերաբերյալ քաղվածքներ (տեղեկություններ), Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ այլ փաստաթղթեր, դրանց համար Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված չափերով Բանկի կատարած ծախսերի հատուցմամբ.

6.2.4 բանկային գործառնությունների, հաշվարկների իրականացման, ինչպես նաև Հաշվի պայմանագրի հետ անմիջականորեն կապված հարցերով Բանկում ստանալ անհատույց խորհրդատվություն.

6.2.5 կարգադրել Բանկին իր Բանկային հաշիվներից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ իր պարտավորությունների կատարման հետ:

6.3 Հաճախորդը հանձնարարում է Բանկին՝

6.3.1 ինկասացման միջոցով Բանկի դրամարկղ հանձնված դրամական միջոցների վերահաշվարկման արդյունքում հայտնաբերված ավելցուկ գումարները մուտքագրել Բանկային հաշվին.

6.3.2 դրամական միջոցների փոխանցումներն իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգով կամ Բանկի հայեցողությամբ այլ վճարահաշվարկային համակարգերով:

6.4 Կողմերն իրավունք ունեն կնքելու համաձայնագիր (պայմանագիր), որի համաձայն Բանկը պարտավորվում է Հաճախորդի համար բացելու չծածկված ակրեդիտիվ՝ այդ համաձայնագրով (պայմանագրով) նախատեսված կարգով և պայմաններով:

6.5 Եթե Հավելվածներով նախատեսված է Հաշվով գործառնություններ իրականացնելու առանձնահատկություններ, ապա դրանցով Կողմերը կարող են ունենալ լրացուցիչ իրավունքներ:

<u>ԲԱԺԻՆ 7. ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԵԳՐՈՒՄԸ</u>

7.1 Հաճախորդի Բանկային հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար Բանկը վճարում է տոկոսներ, որոնց գումարը մուտքագրվում է Հաշվում, եթե այլ բան նախատեսված չէ Հավելվածներով կամ Կողմերի համաձայնությամբ կամ Սակագներով:

Հաճախորդի Բանկային հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները Բանկային հաշվում մուտքագրվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջին օրը:

7.2 Բանկի կողմից ոչ ռեզիդենտ Հաճախորդներին վճարված եկամուտների հարկումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

<u>ԲԱԺԻՆ 8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</u>

8.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հաշվի պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

8.2 Սույն Կանոններով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության (արտակարգ և անկանխելի հանգամանքների) արդյունք, որը ծագել է Հաշվի պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը կամ խափանումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Հաշվի պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցությունը շարունակվում է 1(մեկ) ամսից ավելի, ապա Կողմերը պարտավոր են միմյանց միջև համաձայնեցնել (պայմանավորվել) հետագա գործողությունների մասին, այդ թվում՝ Հաշվի պայմանագիրը լուծելու իրենց մտադրությունների մասին:

8.3 Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության հետևանքով սույն Կանոններով ստանձնած պարտավորությունները չկատարող կողմը պարտավոր է ողջամիտ ժամկետում մյուս կողմին կապի, ներառյալ ինտերնետի միջոցով գրավոր տեղյակ պահել անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայության և պարտավորությունները չկատարելու մասին: Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայության մասին ողջամիտ ժամկետում չտեղեկացնելը նման պարտավորություն կրող կողմին զրկում է վկայակոչել անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայությունը որպես պատասխանատվությունից ազատելու հիմք:

8.4 **Բանկի պատասխանատվությունը:**

8.4.1 Հաճախորդի անունով մուտք եղած դրամական միջոցները (ոսկին) Հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք Հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները (ոսկին) փոխանցելու կամ դրանք վճարելու մասին Հաճախորդի ցուցումները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքերում Բանկը պատասխանատվություն է կրում օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով, բացառությամբ սույն Կանոններով նախատեսված դեպքերի:

8.4.2 Բանկը պատասխանատվություն չի կրում դրամական միջոցների (ոսկու) փոխանցումներ կատարելու Հաճախորդի հանձնարարականները ժամանակին չկատարելու այնպիսի դեպքերում, եթե դրանք չեն կատարվել Բանկի թղթակից բանկերի, ներառյալ ՀՀ կենտրոնական բանկի կամ երրորդ անձանց գործողությունների և(կամ) անգործության հետևանքով:

8.4.3 Բանկը պատասխանատվություն չի կրում իր պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, եթե դա հետևանք է Հաճախորդի ներկայացրած դրամական միջոցների փոխանցման հաշվարկային կամ այլ փաստաթղթերում ոչ բավարար (ոչ ճիշտ) տեղեկությունների, և(կամ) որը հնարավորություն չի տվել հստակ որոշելու դրամական միջոցներ ստացողին և(կամ) հաշվարկային կամ այլ փաստաթղթերը չեն համապատասխանել օրենսդրությամբ և(կամ) ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

8.4.4 Բանկը պատասխանատվություն չի կրում ՀՀ կենտրոնական բանկի կամ Պայմանագրով սահմանված (նախատեսված) պահանջների խախտմամբ կազմված հաշվարկային, դրամարկղային կամ այլ փաստաթղթերի հիման վրա և(կամ) օրենսդրությամբ կամ սույն Կանոններով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված փաստաթղթերի հիման վրա Հաշվով գործառնությունների կատարումը մերժելուն համար:

8.4.5 Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների և հետևանքների համար, որոնք ծագել են Հաշվով գործառնություններ իրականացնելու լիազորություններ չունեցող անձանց ստորագրություններով Հաշվից դրամական միջոցների փոխանցելու կամ կանխիկ դրամական միջոցներ տալու կարգադրությունները կատարելու հետևանքով, կեղծված ստորագրություններ և (կամ) կնիքի դրոշման պարունակող դրամական չեկերով վճարելու և(կամ) դրամարկղային և(կամ) այլ փաստաթղթերով Հաճախորդի կարգադրությունները կատարելու հետևանքով, ինչպես նաև կեղծ կատարողական և(կամ) այլ փաստաթղթերի, այդ թվում օրենսդրությանը համապատասխան առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու և(կամ) փոխանցելու հետևանքով, եթե օրենսդրությամբ, բանկային կանոններով և սույն Կանոններով նախատեսված ընթացակարգերին համապատասխան Բանկը չի կարողացել պարզել կարգադրությունը լիազորված անձանց կողմից չտալու, ստորագրությունների կամ կնիքի դրոշմի կամ կատարողական փաստաթղթերը կեղծված լինելու հանգամանքները:

8.4.6 Բանկը պատասխանատվություն չի կրում Բանկի ծառայություններից օգտվող անձանց առջև վճարման կարգադրությունները չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու համար, որը հետևանք է պետական կառավարման մարմինների, միջազգային կառույցների, կազմակերպությունների որոշումների, կանոնակարգերի, կարգավորումների, միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի, որոնք ուղղակի կամ անուղղակի արգելում կամ խոչընդոտում են Բանկին իրականացնել իր պարտավորությունները, ներառյալ այնպիսի արգելող կամ սահմանափակող միջոցառումների ձեռնարկումը, որոնք իրենց ազդեցությունն են ունենում Բանկի ծառայություններից օգտվող անձանց նկատմամբ Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների իրականացման վրա, և այլ հանգամանքներ, որոնք անկախ կողմերի կամքից և Բանկի կողմից ձեռնարկված բոլոր ողջամիտ միջոցներից անհնարին են դարձնում Բանկի կողմից վճարման կարգադրությունների կատարումը:

8.5 **Հաճախորդի պատասխանատվությունը:**

8.5.1 Հաճախորդը պատասխանատվություն է կրում օրենսդրությանը համապատասխան Հաշվով գործառնություններ իրականացնելու համար, ինչպես նաև Հաշվի բացման և Հաշվով գործառնություններ իրականացնելու համար հիմք հանդիսացող և Բանկ ներկայացվող փաստաթղթերի ձևակերպման և արժանահավատության համար:

8.5.2 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Հաշվի բացման և Հաշվով գործառնություններ իրականացնելու համար Բանկին համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու լիազորություններ ունեցող անձանց գործողությունների համար:

8.5.3 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Հաշվին սխալմամբ փոխանցված դրամական միջոցները (ոսկին) Բանկին վերադարձնելու պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Եթե Հաճախորդը սույն Կանոններով նախատեսված ժամկետներում Բանկին չի վերադարձնում Հաշվին սխալմամբ փոխանցված դրամական միջոցները, ապա այդ դրամական միջոցներին վճարվում են տոկոսներ՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

8.5.4 Հաճախորդը պատասխանատվություն է կրում իր հետ կապի համար Բանկին ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ (Հաճախորդի հեռախոսի համար, էլեկտրոնային փոստի հասցե, փոստային թղթակցության ուղարկման փոստային հասցե, այլ տեղեկություններ) ներկայացնելու պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, ինչպես նաև ժամանակին թարմացված տեղեկություններ ներկայացնելու համար:

8.5.5 Հաճախորդը պատասխանատվություն է կրում և բոլոր անբարենպաստ հետևանքները վերցնում է իր վրա Հաշվին ինկասո հանձնարարության հիման վրա դրամական միջոցներ ստացողին հաստատելու մասին Բանկի հարցումներին ժամանակին պատասխանելու պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու և (կամ) հարցումների անարժանահավատ պատասխաններ ներկայացնելու համար:

<u>ԲԱԺԻՆ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ</u>

9.1 Բոլոր վեճերը, որոնք ծագում են Հաշվի պայմանագրի կատարման ընթացքում, Կողմերի կողմից լուծվում են բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով՝ երկկողմանի ընդունելի որոշումներ կայացնելու համար:

9.2 Կողմերը համաձայնվում են բանակցությունները և/կամ խորհրդակցությունները անարդյունք գրանցվելու կամ փոխադարձ ընդունելի որոշումներ չկայացվելու կամ ծագած վեճերը չլուծվելու դեպքում վեճերի լուծումը, վեճերի լուծումը հանձնել ՀՀ իրավասու դատարանների քննությանը (լուծմանը)՝ ՀՀ դատավարական օրենսդրությանը համապատասխան:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի պահանջներին բավարարող Հաճախորդը հնարավորություն ունի Հաշվի պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով: Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված Պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250000,00 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500000,00 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

9.3 Կողմերը պայմանավորվում են, որ Հաշվի պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական ծանուցում, այդ թվում՝ դատավարական փաստաթուղթ, ուղարկվում են Կողմերին հայտնի վերջին ծանուցման հասցեներով:

<u>ԲԱԺԻՆ 10. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ</u>

10.1 Սույն Կանոններում փոփոխություններն ու լրացումները, այդ թվում՝ նոր խմբագրությամբ Կանոնները հաստատվում (կատարվում) են Բանկի նախաձեռնությամբ՝ սույն բաժնով նախատեսված կարգով:

10.2 Բանկը տեղեկացնում է Հաճախորդին սույն Կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ Կանոնները հաստատելու մասին ոչ ուշ, քան դրանք ուժի մեջ մտնելուց 5(հինգ) օր առաջ՝ սույն Կանոնների 2.4 կետում նշված միջոցներից մեկով:

10.3 Սույն Կանոնների փոփոխություններն ու լրացումները, այդ թվում՝ նոր խմբագրությամբ հաստատված Կանոնները ուժի մեջ են մտնում սույն Կանոնների 10.2-րդ կետում նշված ժամկետի ավարտմանը հաջորդող օրվանից:

10.4 Սույն Կանոնների ցանկացած փոփոխություն և լրացում, այդ թվում՝ նոր խմբագրությամբ հաստատված Կանոնները ուժի մեջ մտնելուց հետո հավասարապես տարածվում են այն բոլոր անձանց վրա, որոնք միացել են սույն Կանոններին, այդ թվում՝ մինչև ուժի մտնելը սույն Կանոններին միացած անձանց վրա:

10.5 Եթե Հաճախորդը համաձայն չէ սույն Կանոններում կատարված փոփոխություններին և լրացումներին, այդ թվում նոր խմբագրությամբ հաստատված Կանոններին, ապա իրավունք ունի լուծել Հաշվի պայմանագիրը սույն Կանոնների 11.2-րդ կետով նախատեսված կարգով:

ԲԱԺԻՆ 11. ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ: ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀՐԱԺԱՐՈՒՄ: ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

11.1 Հաշվի պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամանակով:

11.2 Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Հաշվի պայմանագիրը: Հաշվի պայմանագրի լուծման համար Հաճախորդը պարտավոր է Բանկին ներկայացնել Հաշվի պայմանագիրը լուծելու վերաբերյալ դիմում՝ Բանկի կողմից սահմանված ձևով, Բանկին հանձնել չօգտագործված դրամարկղային չեկային գրքույկը՝ չօգտագործված դրամական չեկերով, և կարգավորել Հաշվի պայմանագրով Բանկի հետ փոխադարձ հաշվարկների կատարումը:

Բանկին Հաճախորդի կողմից իր անձնական տվյալները մշակելու համաձայնությունը հետ կանչելու կամ դադարեցնելու պահանջ ներկայացնելու դեպքում ևս դիտարկվում է որպես Հաշվի պայմանագիրը լուծելու պահանջ և կիրառվում են նախորդ պարբերությունում նկարագրված Հաշվի պայմանագիրը լուծելու համար նախատեսված ընթացակարգը:

Հաշվի փակման դիմումի հիման վրա լուծվում է միայն տվյալ բանկային հաշվի վերաբերյալ կնքված Հաշվի պայմանագիրը, իսկ սույն կետի 2-րդ պարբերությունում նշված դեպքում լուծվում են բոլոր տեսակի բանկային հաշվի վերաբերյալ կնքված Հաշվի պայմանագիրը:

11.3 Բանկի կողմից Հաշվի փակման վերաբերյալ դիմումի ընդունումը հաստատվում է դրա վրա Բանկի կողմից համապատասխան նշում կատարելու փաստով:

11.4 Հաշվի պայմանագիրը համարվում է լուծված սույն Կանոնների 11.2-րդ կետում նշված Հաճախորդի դիմումը ստանալու պահից: Դրամական միջոցները(ոսկին), որոնք գտնվում են Հաշվում և մնացել են Բանկի հանդեպ Հաճախորդի ունեցած պարտքը մարելուց հետո, Բանկի կողմից տրամադրվում է Հաճախորդին կանխիկ եղանակով (սույն կարգը գործում է միայն անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց մասով) կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշիվ օրենսդրությանը համապատասխան և սույն Կանոններով նախատեսված պայմաններով Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց հետո ոչ ուշ, քան 7(յոթ) օրվա ընթացքում:

11.5 Հաճախորդը սույնով համաձայն է, որ Բանկի նախաձեռնությամբ Հաշվի պայմանագիրը կարող է լուծվել ցանկացած ժամանակ՝ այդ մասին 30 օր առաջ գրավոր տեղեկացնելով Հաճախորդին՝ Բանկին հայտնի նրա վերջին հասցեով, եթե առկա են սույն կետի 2-րդ պարբերությունում նշված հանգամանքները:

Բանկն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել Բանկային հաշվի նկատմամբ սույն Կանոնները կատարելուց, եթե մեկ տարվա ընթացքում Բանկային հաշվով գործառնություններ չեն կատարվել կամ երբ Հաճախորդի Բանկային հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պակաս է Սակագներով նախատեսված նվազագույն չափից, եթե նման գումարը չի վերականգնվել այդ մասին Բանկի զգուշացման օրվանից 1(մեկ) ամսվա ընթացքում: Բանկային հաշվի պայմանագիրը համարվում է լուծված վերոհիշյալների վերաբերյալ Բանկի գրավոր զգուշացման օրվանից 1(մեկ) ամիսն անցնելուց հետո, եթե այդ ժամկետի ընթացքում Բանկային հաշվով գործառնություններ չեն կատարվել կամ Հաճախորդի Բանկային հաշվում պահվող դրամական միջոցների գումարը չի համալրվել առնվազն Սակագներով նախատեսված նվազագույն չափով:

11.6 Հաշվի պայմանագրի լուծումը հիմք է Հաճախորդի Հաշիվը փակելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ միաժամանակյա առկա են Հաշվում դրամական միջոցներ(ոսկի) և պետական ու այլ իրավասու մարմինների որոշումներ Հաշվով գործառնությունները կասեցնելու կամ Հաշվում առկա դրամական միջոցների(ոսկու) վրա արգելանք դնելու մասին: Նշված դեպքերում Հաշիվը փակվում է վերոհիշյալ որոշումները վերացնելու մասին Բանկի կողմից ծանուցումներ ստանալուց հետո:

ԲԱԺԻՆ 12. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1 Կողմերի լրացուցիչ համաձայնագրերով (պայմանագրերով) կարող են կարգավորվել Բանկի և(կամ) երրորդ անձանց կողմից Հաճախորդի դրամական միջոցների ինկասացման ու դրանք Հաճախորդին հանձնելու, Բանկային հաշվում գտնվող դրամական միջոցների մնացորդի դիմաց տոկոսների հաշվարկման (կուտակման), էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի (հեռահաղորդակցության համընդհանուր օգտագործման ուղիների) օգտագործման միջոցով էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, այդ թվում՝ էլեկտրոնային ստորագրությունների, ծածկագրերի, նշանաբանների, այլ միջոցների նմանօրինակների և(կամ) տեղեկությունների պաշտպանության այլ միջոցների, Հաճախորդին սպասարկելու հետ կապված իրավահարաբերությունները:

12.2 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն (թույլտվությունը) առ այն, որպեսզի Բանկը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրի (հրապարակի) Բանկի ղեկավարներին և այլ աշխատողներին՝ նրանց աշխատանքային պարտականություններին համապատասխան, ինչպես նաև Հաշվի պայմանագրով նախատեսված Բանկի իրավունքների իրացման և պարտականությունների կատարման նպատակով Բանկի կողմից

ներգրավված երրորդ անձանց, ինչպես նաև օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով Բանկի վրա դրված պարտականությունները կատարելու նպատակով:

12.3 Հաշվի պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող Հաճախորդի ցանկացած պահանջ, ծանուցում, դիմում կամ այլ հաղորդում ուղարկվում է Բանկի Սպասարկող ստորաբաժանման www.amiobank.am ինտերնետային կայքէջում նշված վավերապայմաններով կամ այլ վավերապայմաններով, իսկ Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում Հաճախորդին տեղեկացվում է սույն Կանոնների 2.4-րդ կետում նշված միջոցներից որևէ մեկով:

Հաճախորդի պահանջը ծանուցումը, դիմումը կամ այլ հաղորդումը Բանկին ներկայացվում է գրավոր փաստաթղթի ձևով, որը պետք է ստորագրված լինի վերջինիս ստորագրությունների նմուշի և կնիքի դրոշմի քարտում նշված լիազորված անձի կողմից ու դրոշմված լինի Հաճախորդի կնիքով (Հաճախորդի ցանկությամբ):

Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագիր կնքված լինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի Բանկին ներկայացնել պահանջ, ծանուցում, դիմում, հաղորդում կամ այլ փաստաթուղթ՝ էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի միջոցով, Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագրով նախատեսված կարգով: Այն դեպքերում, երբ սույն Կանոններով նախատեսված է, որ որևէ փաստաթուղթ Հաճախորդի կողմից պետք է կազմվի Բանկի հաստատած օրինակելի ձևով, ապա այդպիսի փաստաթուղթը Հաճախորդը պետք է ներկայացնի Բանկ Էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի միջոցով միայն այն դեպքում, եթե համապատասխան փաստաթուղթը օրինակելի ձևով կազմելու հնարավորությունն ապահովված է էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի կարգավորումներով:

Հաշվի պայմանագրով նախատեսված Բանկի բոլոր ծանուցումները, որոնք վերաբերում են անսահմանափակ անձանց սպասարկելու հետ կապված հարցերին, Բանկի կողմից ուղարկվում են Հաճախորդին սույն Կանոնների 2.4-րդ կետում նշված միջոցների կամ դրանցից մեկի օգտագործմամբ, իսկ այն ծանուցումները, որոնք կապված են Հաճախորդի սպասարկման հետ, ուղարկվում են Էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի օգտագործմամբ (Կողմերի միջև Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագիր կնքվելու դեպքում) կամ այդպիսի ծանուցումները հանձնվում (ուղարկվում) են Հաճախորդին ցրիչի կամ «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքով սահմանված փոստային առաքման միջոցով՝ Բանկին Հաճախորդի կողմից ներկայացված միանալու մասին դիմումում կամ սույն Կանոններին համապատասխան այլ փաստաթղթում նշված փոստային վավերապայմաններով կամ Բանկին հայտնի Հաճախորդի վերջին փոստային հասցեով:

Սույն Կանոններում նշված գրավոր փաստաթղթերը (ծանուցումներ, պահանջներ, հաղորդումներ, գրավոր թղթակցություն և այլն) հասցեատերերի կողմից համարվում են ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերը այդ հասցեում այլևս չի գտնվում (չի բնակվում), եթե սույն Կանոնների 12.4-րդ կետին համապատասխան Կողմերը միմյանց գրավոր չեն հայտնել իրենց փոստային/ծանուցման հասցեները (գտնվելու/բնակության/հաշվառման վայրերը) փոխելու մասին:

Կողմերը եկան համաձայնության այն մասին, որ արտարժութային գործառնությունների կատարման, հաշվառման և հսկողության հետ կապված փաստաթղթերի և տեղեկությունների փոխանակման կարգը և եղանակները որոշվում են Բանկի կողմից միակողմանիորեն և Հաճախորդին տեղեկացվում է սույն Կանոնների 2.4-րդ կետում նշված միջոցներով կամ դրանցից որևէ մեկով:

12.4 Կողմերը 3(երեք) աշխատանքային օրվա ընթացքում պետք է միմյանց տեղեկացնեն իրենց փոստային/ծանուցման հասցեների (գտնվելու/բնակության/հաշվառման վայրերի, էլ. փոստի հասցեի և այլն) փոփոխությունների մասին, հակառակ դեպքում սույն Կանոններից կամ Հաշվի պայմանագրից բխող գրավոր թղթակցություններն իրականացվում են Կողմին հայտնի մյուս Կողմի վերջին հասցեով: Փոփոխությունների մասին մյուս Կողմ(եր)ին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող անձը:

12.5 Հաշվի պայմանագրից ծագած Հաճախորդի պարտավորությունները, առանց Բանկի գրավոր անվերապահ համաձայնության, նրա հայտարարությամբ չեն կարող լրիվ կամ մասնակի դադարել Բանկի նկատմամբ Հաճախորդի հանդիպակաց պահանջի հաշվանցով:

12.6 Եթե օրենսդրության մեջ և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերում կատարվել են փոփոխություններ, որոնք ազդում են Հաշվի պայմանագրի պայմանների վրա, ապա Հաշվի պայմանագիրը գործում է այն մասով, որը չի հակասում օրենսդրությանը և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին:

12.7 Բանկային հաշիվը բացելիս Բանկը ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր հանդիսացող Հաճախորդին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

12.8 Բանկային հաշիվը բացելիս Բանկը Հաճախորդին հանձնում է «ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը:

12.9 Հավելվածները հանդիսանում են սույն Կանոնների անբաժանելի մաս(եր)ը:

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բանկային և առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոնների
Հավելված 1

էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգով բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկման առանձնահատկությունները

1. Դիմում-պայմանագրով Հաճախորդին Էլեկտրոնային («Բանկ-Հաճախորդ», «Ինտերնետ-Բանկ», «Մոբայլ-Բանկ» և այլն) բանկային սպասարկման համակարգ (Համակարգ) տրամադրելու դեպքում Հաշվի (Հաշիվների) սպասարկումն իրականացնում է նաև էլեկտրոնային եղանակով**:**
   Համակարգով Հաշվի (Հաշիվների) սպասարկում իրականացնելիս Կողմերն անառարկելիորեն ընդունում և հաստատում են, որ՝

ա) Հաճախորդը ծանոթացել է իր կողմից Բանկում բացված Հաշվի (Հաշիվների) միջոցով էլեկտրոնային տեսքով հաշվարկային գործառնությունների կատարման կարգին, որի կատարումն ապահովվում է Համակարգի միջոցով, որը բաղկացած է տեղեկատվության մշակման, պահպանման, պաշտպանության (այդ թվում՝ գաղտնագրման) և ինտերնետի միջոցով (Ինտերնետ) տեղեկատվության փոխանցման ենթահամակարգերից:
բ) Հաշվով Էլեկտրոնային գործառնություններ կատարելիս օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերը, որոնց ԷԹՍ-ով վավերացումը Բանկի և Հաճախորդի կողմից կատարված է Կանոնների սույն հավելվածի 3-րդ և 7-րդ բաժինների պահանջներին համապատասխան, համարվում են համապատասխան թղթային փաստաթղթերին համարժեք՝ առաջացնելով Պայմանագրով ամրագրված համապատասխան իրավունքներ և պարտավորություններ:
գ) Օգտագործվող տեղեկատվության մշակման, պահպանման, պաշտպանության և փոխանցման ենթահամակարգերը բավարար են Հաշվի՝ հուսալի, արդյունավետ և անվտանգ սպասարկումն ապահովելու համար:
դ) Պայմանագրի հիման վրա իրենց կողմից օգտագործվող տեղեկատվության պաշտպանության Համակարգը, որն ապահովում է տեղեկատվության ամբողջականության և իսկության վերահսկումը գաղտնագրման և ԷԹՍ-ի կիրառմամբ, բավարար է այն երրորդ անձանց կողմից անթույլատրելի օգտագործումից պաշտպանելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթղթի իսկությունը հաստատելու և դրա վրա ԷԹՍ դրած անձին նույնականացնելու համար:

2. <u>ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ</u>

2.1. Հաճախորդը Համակարգի միջոցով Հաշվով իրականացնում է Համակարգով իրեն հասանելի բոլոր հաշվարկային գործառնությունները և ստանում հաշվի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

2.2. Հաճախորդը Բանկի կողմից հաստատված ձևը լրացնելու միջոցով սահմանում է Համակարգում աշխատելու համար իր Հաշվի օգտագործողներին և այդ ձևը ներկայացնում Բանկին: Ֆիզիկական անձ Հաճախորդի կողմից որպես իր Հաշվի օգտագործողներ այլ անձանց սահմանելու դեպքում, Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել նաև նոտարական կարգով վավերացված կամ Հաճախորդի և որպես օգտագործող նշվող անձի Բանկում պարտադիր համատեղ ներկայությամբ տրված պատշաճ ձևակերպված համապատասխան լիազորագիր:

2.3. Կանոններով և Բաժին 6-ով սահմանված կարգով ձևակերպվում և Բանկ է ուղարկում Վճարային Էլեկտրոնային փաստաթուղթը, որը ստանալուց հետո Բանկը ստուգում է այն և լիարժեք լինելու դեպքում՝ կատարում:

2.4. Հաճախորդը ծանուցվում է Էլեկտրոնային փաստաթղթի ստուգման, բացասական արդյունքի, և հետևաբար, Էլեկտրոնային փաստաթղթով տրված հանձնարարականի կատարման մերժման վերաբերյալ՝ Համակարգում փաստաթղթի կարգավիճակի համապատասխան փոփոխման միջոցով:

2.5. Կողմերն իրավունք ունեն Համակարգի միջոցով փոխանցել և /կամ ստանալ Կանոնների սույն հավելվածի բաժին 6-ում նշված էլեկտրոնային փաստաթղթերը: Համակարգով թույլատրվում է փոխանցել նաև այլ տեղեկատվություն, որը, սակայն, Պայմանագրով սահմանված պարտավորություններ չի առաջացնի ստացող Կողմի համար:

2.6. Էլեկտրոնային Փաստաթուղթը առաջացնում է պարտավորություններ, եթե այն Հաճախորդի կողմից պատշաճ կերպով ձևակերպված է և վավերացված ԷԹՍ-ով/ներով: Այդ դեպքում Բանկն այն ստանալուց և ստուգելուց հետո ընդունում է ի կատարումն:

3. <u>ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>

3.1. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է.

3.1.1. Համակարգի միջոցով գործառնություններ կատարելիս առաջնորդվել Պայմանագրի պահանջներով, իսկ չկարգավորված գործառնությունների մասով՝ ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև հաշիվների էլեկտրոնային սպասարկման ոլորտում գործող բանկային կանոններով, բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով,

3.1.2. մյուս կողմի պահանջով, ոչ ուշ քան պահանջը ստանալու հաջորդ բանկային օրը, պահանջող կողմին ներկայացնել Հաշվով գործառնության կատարման համար հիմք հանդիսացած էլեկտրոնային փաստաթղթերի՝ պատշաճ կերպով ձևակերպված թղթային տարբերակները,

3.1.3. պահպանել Գաղտնաբանալիների գաղտնիությունը, ինչպես Պայմանագրի գործողության, այնպես էլ դրա գործողության դադարումից 1 (մեկ) օրացուցային տարվա ընթացքում:

3.2. Հաճախորդն իրավունք ունի.

3.2.1. Համակարգի միջոցով էլեկտրոնային փաստաթղթերի փոխանցման անհնարինության դեպքում Հաշվով համապատասխան պահանջվող գործառնություններն իրականացնել՝ պատշաճ թղթային տեսքով ձևակերպված համապատասխան փաստաթղթերը Բանկ ներկայացնելու միջոցով:

3.3. Հաճախորդը պարտավոր է .

3.3.1. վերահսկել իր էլեկտրոնային փաստաթղթերում վավերապայմանների ճշտությունը,

3.3.2. Համակարգից օգտվել միայն սարքին վիճակում գտնվող և համակարգչային վիրուսներից զերծ համակարգչի միջոցով: Սույն պահանջը չպահպանելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգի անխափան և ճշգրիտ աշխատանքի համար:

3.3.3. ձեռնարկել բոլոր միջոցները՝ Գաղտնաբանալին պահպանելու և երրորդ անձանց հասանելի չդարձնելու ուղղությամբ՝ Բանկին ազատելով (զերծ պահելով) սույն կետով ստանձնած պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասին վերաբերող ցանկացած պահաջից,

3.3.4. Գաղտնաբանալու կորստի կամ այն երրորդ անձանց հասանելի լինելու մասին իմանալու դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Բանկին՝ համապատասխան հայտարարությունը 24 (Քսանչորս) ժամվա ընթացքում պատշաճ գրավոր ձևով և հաստատված (ստորագրված) Բանկ ներկայացնելով/ուղարկելով:

3.3.5. ԷԹՍ-ն բջջային հեռախոսի միջոցով sms հաղորդագրություններով ստանալու պարագայում՝ դիմումում նշված հեռախոսահամարի փոփոխության կամ կորստի դեպքում անհապաղ հայտնել Բանկին, հեռախոսահամարի փոփոխության դեպքում՝ ներկայացնելով գրավոր դիմում-հայտ կամ տեղեկացնելով համաձայնեցված էլեկտրոնային եղանակով:

3.3.6. Էլեկտրոնային փաստաթղթերը Բանկին ուղարկել պատշաճ ձևավորված վիճակում:

3.3.7. Համակարգով աշխատանքային սեանսն ավարտելուց հետո կատարել «Ելք» գործողությունը՝ սեղմելով «Ելք» կոճակը Ինտերնետ բրաուզերի պատուհանում: Աշխատանքային սեսիայի ծրագրային խափանումների պատճառով /կախվել է բրաուզերը, խափանվել է կապը Ցանցի հետ և այլն/ ընդհատման ժամանակ կատարել «Ելք» գործողությունը օպերացիոն համակարգից /LogOff, Log Out, Завершение сессии և այլն՝ կախված սեսիան իրականացնող համակարգչի օպերացիոն համակարգից/: Սույն պահանջը չկատարելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգի անխափան և ճշգրիտ աշխատանքի համար:

3.3.8. անհրաժեշտության դեպքում Բանկի պահանջով, սակայն ոչ ուշ քան էլեկտրոնային փաստաթղթով գործարքի կատարման պահանջը ստանալու հաջորդ բանկային օրը, ներկայացնել Հաշվով գործառնության կատարման համար հիմք հանդիսացած էլեկտրոնային փաստաթղթերի՝ պատշաճ կերպով ձևակերպված թղթային տարբերակը:

3.4. Բանկն իրավունք ունի.

3.4.1. ձևակերպել Հաճախորդի կատարած էլեկտրոնային փաստաթղթերի թղթային տարբերակները և հաստատել դրանք՝ համաձայն Բանկում գործող ներքին ակտերի պահանջների,

3.4.2. Բանկում տեղի ունեցած տեխնիկական վթարների կամ այլ նմանատիպ իրավիճակների դեպքում, որոնք խոչընդոտում են Համակարգով էլեկտրոնային փաստաթղթերի փոխանցմանը, անորոշ ժամկետով, միակողմանիորեն դադարեցնել Համակարգով էլեկտրոնային փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության փոխանցումների իրականացումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին: Նման դեպքերում բոլոր փաստաթղթերը պետք է շրջանառվեն թղթային տեսքով՝ համաձայն Բանկում գործող ներքին ընթացակարգի: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն ենթակետում նշված դեպքերում Հաճախորդին պատճառված ցանկացած վնասի համար:

3.4.3. Հաճախորդին անջատել Համակարգից, եթե.

3.4.3.1. վերջինս խախտում է Կանոններով սահմանված պահանջները,

3.4.3.2. Հաճախորդը 3 (երեք) ամիս անընդմեջ Համակարգից չի օգտվել (մուտք չգործել) (ֆիզիկական անձ հաճախորդների դեպքում բացառությամբ դիտելու իրավասությամբ հաճախորդների).

3.4.3.3. Պայմանագիրը լուծվել է և Հաճախորդի հաշիվները փակվել են.

3.4.3.4. Բանկում տեղի ունեցած տեխնիկական վթարների կամ այլ նմանատիպ իրավիճակների դեպքում, որոնք խոչընդոտում են Էլեկտրոնային փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության փոխանցումների իրականացումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին.

3.4.3.5. Հաճախորդի կողմից Համակարգից անվտանգ օգտվելու կանոնների պարբերաբար խախտման դեպքում.

3.4.3.6. Հաճախորդի կողմից համակարգի անվտանգությանը սպառնացող գործողությունների դեպքում (օրինակ՝ կցում է վարակված ֆայլ):

3.5. Բանկը պարտավոր է .

3.5.1. Հաճախորդի կողմից Համակարգով ստացվող, պատշաճ ձևակերպված էլեկտրոնային փաստաթղթերի հիման վրա Հաճախորդի Հաշվով իրականացնել հաշվարկային գործառնություններ: Այն էլեկտրոնային փաստաթղթերը, որոնց կատարման հրահանգները ստացվել են գործառնական օրվա ընթացքում, Բանկը պարտավորվում է իրականացնել նույն բանկային օրվա ընթացքում: Այն փաստաթղթերը, որոնք ստացվել են գործառնական օրվա ավարտից հետո, Բանկը պարտավորվում է իրականացնել հաջորդ բանկային օրվա ընթացքում:

3.5.2. Հաճախորդին տեղեկացնել ի կատարումն ընդունած և մերժված էլեկտրոնային փաստաթղթերի մասին՝ նշելով էլեկտրոնային փաստաթղթի կարգավիճակը և դրա մերժման պատճառը,

3.5.3. Բանկը պարտավորվում է Հաճախորդի էլեկտրոնային փաստաթղթերի հիման վրա իրականացնել այլ հաճախորդներից Հաճախորդի հաշվին թղթակից բանկերից, քլիրինգայի կենտրոններից, ՀՀ Կենտրոնական Բանկից ստացվող միջոցների ընդունում,

3.5.4. մինչև հանձնարարականի կատարումը ստուգել Հաճախորդի կողմից Համակարգով ներկայացված էլեկտրոնային փաստաթղթերի համապատասխանությունը սահմանված պահանջներին,

3.5.5. Հաճախորդի կողմից իր Գաղտնաբանալին կորցնելու և նորը պահանջելու մասին ծանուցումը ստանալուց հետո 3 (երեք) բանկային օրվա ընթացքում Հաճախորդին տրամադրել նոր Գաղտնաբանալի,

3.5.6. չկատարել Հաճախորդի կողմից Համակարգով ուղարկված, ոչ ճիշտ լրացված էլեկտրոնային փաստաթղթերը,

3.5.7. ինքնուրույն չուղղել Հաճախորդի կողմից Համակարգով ուղարկված էլեկտրոնային փաստաթղթերը,

3.5.8. ապահովել Հաճախորդի կողմից Համակարգով իրականացված էլեկտրոնային գործառությունների գաղտնիությունը:

3.6. Համակարգով Հաճախորդին տրամադրվում է

3.6.1. միայն հայտում նշված Հաշիվները և պայմանագրերը դիտելու իրավունք,

3.6.2. հայտում նշված Հաշիվները և պայմանագրերը դիտելու և Հաշվով հաշվարկային գործառնություններ իրականացնելու իրավունք:

3.7. Այն դեպքում, երբ Հաճախորդին տրամադրվում է Համակարգով միայն իր Հաշիվը դիտելու իրավունք, ապա Կանոնների սույն Հավելվածով նախատեսված՝ Հաշվով հաշվարկային գործառնությունների իրականացմանը վերաբերող դրույթները չեն գործում:

4. <u>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>

4.1. Հաճախորդին նոր Գաղտնաբանալի տրամադրելու համար վերջինիս Հաշվից անակցեպտ կարգով գանձվում է վճար՝ Բանկի կողմից հաստատված Սակագներով սահմանված չափով:

4.2. Համակարգի օգնությամբ հաշվարկային գործառնություններ իրականացնելու համար Բանկի կողմից տրամադրված ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) դիմաց Հաճախորդից գանձվում է վճար (այսուհետ՝ Ծառայության վճար)՝ Բանկի Սակագներով և դրույքներով սահմանված չափով, ժամկետներում և կարգով, որը կարող է փոփոխվել Պայմանագրի գործողության ընթացքում: Փոփոխված Սակագնի հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին

առնվազն 5 (հինգ) օր առաջ տեղյակ պահելով Բանկին և վճարելով մինչև Պայմանագրի լուծման պահը մատուցված Ծառայությունների դիմաց:

4.3. Ծառայության վճարը սկսում է գանձվել Պայմանագիրը կնքելու ամսվանը հաջորդող ամսվանից, իսկ տարեկան կտրվածքով գանձվող միջնորդավճարները՝ առաջին տարվա համար՝ Պայմանագիրը կնքելու օրը, իսկ հաջորդ տարիների համար՝ մինչև Պայմանագիրը գործելու հերթական տարին լրանալու ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը: Միանվագ գանձվող միջնորդավճարները գանձվում են Պայմանագիրը կնքելու օրը: Բանկը անակցեպտ կարգով իրականացնում է Ծառայությունների վճարի գանձումը Հաճախորդի հաշվից, իսկ դրանում բավարար միջոցների բացակայության դեպքում Հաճախորդի՝ Բանկում ունեցած այլ հաշիվներից, այդ թվում՝ Հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշիվներից, որի դեպքում արժույթների փոխանակումն իրականացվում է Բանկում տվյալ օրվա /գանձման պահի/ դրությամբ գործող փոխարժեքով:

4.4. Հաճախորդի՝ Բանկում ունեցած բոլոր հաշիվներում միջոցների դուրս գրման համար բավարար գումարի՝ 1/մեկ/ ամսից ավելի ժամկետով բացակայության դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել Համակարգի միջոցով Հաճախորդի սպասարկումը՝ մինչև պարտավորության ամբողջական մարումը:

4.5. Եթե Կանոնների սույն հավելվածի 4.4. կետով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո 1 /մեկ/ ամսվա ընթացքում պարտքի գումարը Հաճախորդի կողմից

4.5.1. մարվում է, ապա վերջինս կրկին միացվում է Համակարգին, որի համար Հաճախորդից Կանոնների սույն հավելվածի 4.2-րդ կետով սահմանված անակցեպտ կարգով գանձվում է վճար՝ Բանկի Սակագներով և դրույքներով սահմանված չափով,

4.5.2. չի մարվում, Բանկն իրավունք է ստանում միակողմանիորեն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Հաճախորդից պահանջելով վճարելու պարտքի ամբողջ գումարը և փակել Հաշիվները՝ Կանոններով սահմանված ժամկետում ծանուցելով Հաճախորդին:

5. <u>ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</u>

5.1. Կանոնների սույն հավելվածով սահմանված դրույթների խախտման դեպքում, դրանց հետևանքների համար պատասխանատվությունը կրում է խախտող Կողմը:

5.2. Բանկը պատասխանատվություն չի կրում.

5.2.1. ոչ իր մեղքով Հաճախորդի կրած վնասների համար՝ ներառյալ Հաճախորդի կողմից սխալմամբ, սակայն Կանոնների 2-րդ և 6-րդ բաժինների պահանջների պահպանմամբ լրացված վճարային էլեկտրոնային փաստաթղթերի՝ Բանկի կողմից կատարումը, եթե այդ փաստաթղթերը պատշաճ կերպով ձևակերպվել և փոխանցվել են Հաճախորդի կողմից Բանկին, իսկ վերջինս ստացել, ստուգել և համոզվել է դրանց ճշտության մեջ,

5.2.2. Հաճախորդի կողմից վճարման հանձնարարական պարունակող էլեկտրոնային փաստաթղթի ճիշտ և պատշաճ ձևակերպված չլինելու արդյունքում վճարման հանձնարարականը չկատարելու հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար,

5.2.3. այն անձանց անտեսման (անգործության) և/կամ ոչ ժամանակին կատարած գործողությունների հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար, որոնց օգտին Հաճախորդի հանձնարարությամբ կատարվում է հաշվարկային գործառնություն,

5.2.4. ոչ իր մեղքով երրորդ անձին հայտնի դարձած Գաղտնաբանալիների օգտագործմամբ Բանկին փոխանցված և Բանկի կողմից կատարված վճարման հանձնարարականների կատարման հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար.

5.2.5. Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

5.3. Բանկը պատասխանատվություն է կրում Հաճախորդի կողմից պատշաճ ձևակերպված և ժամանակին Բանկին ուղարկված էլեկտրոնային Փաստաթղթի վրա Հաճախորդի հաշվով հաշվարկային գործառնությունների կատարման ժամկետները չպահպանելու հետևանքով Հաճախորդի կրած միայն և բացառապես ուղղակի և պատշաճ հիմնավորված և ապացուցված վնասների համար:

5.4. Հաճախորդը լիակատար պատասխանատվություն է կրում Համակարգի շահագործման հետ կապված տեխնիկական, գործառնական և այլ հնարավոր ռիսկերի համար, ինչպես նաև Գաղտնաբանալիների գաղտնի պահպանության համար:

6. <u>ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ</u>

6.1. Հաճախորդի կողմից Բանկին ուղարկվող էլեկտրոնային փաստաթղթերի տեսակները.

6.1.1. Վճարման հանձնարարականներ, այդ թվում ՝ ՀՀ դրամով և արտարժույթով,

6.1.2. Արտարժույթի փոխանակման Հայտ,

6.1.3. Վարկի մարման Հայտ,

6.1.4. Ավանդի համալրման Հայտ

6.1.5. Հաշվի հետ կապված և առնչվող ազատ ֆորմատի հաղորդագրություններ:

6.2. Բանկի կողմից Հաճախորդին ուղարկվող էլեկտրոնային փաստաթղթերի տեսակները.

6.2.1. Քաղվածք հաշվից.

6.2.2. Տեղեկանքներ և այլ տեղեկատվություն,

6.2.3. Հաշվի հետ կապված և առնչվող ազատ ֆորմատի հաղորդագրություններ:

6.3. էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի նկատմամբ կիրառվող պահանջներ.

6.3.1. Բոլոր էլեկտրոնային փաստաթղթերը պետք է ընդգրկեն անհրաժեշտ բանկային ռեկվիզիտներ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի պահանջների:

7. <u>ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ</u>

7.1. Համակարգով Բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկումն ուժի մեջ է մտնում Դիմում-պայմանագրի կնքման պահից և գործում է Հաշվի պայմանագրի ժամկետով, սակայն ամեն դեպքում, մինչև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Համակարգով Բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկումը կարող է Հաճախորդի պահանջով ցանկացած ժամանակ դադարեցվել՝ այդ մասին առնվազն 5 (հինգ) օր առաջ տեղեկացնելով Բանկին:

Համակարգով Բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկումը կարող է Բանկի պահանջով դադարեցվել միայն Կանոնների սույն Հավելվածում նշված դեպքերում և կարգով:

7.3. Համակարգով Բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկումից պայմանագրից բխող ծանուցումները պետք է լինեն գրավոր ձևով, որոնք պետք է ուղարկվեն Դիմում-Պայմանագրում նշված հասցեներով, իսկ վերջիններիս փոփոխման դեպքում՝ փոփոխված հասցեներով:

Համաձայն բանկային և առարկայազուրկ
մետաղական հաշիվների բացման և սպասարկման
հիմնական (ընդհանուր) կանոնների
Հավելված 2

ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հաշիվների սպասարկման առանձնահատկությունները

1. ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման Հաշիվները հանդիսանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50.1-րդ գլխով նախատեսված հատուկ բանկային հաշիվներ և դրանցում ներդրված միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց կամ հաճախորդի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց:

2. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն (այսուհետ՝ Օրենք) Շահառու են հանդիսանում այն զինծառայողները, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետևանքով, իսկ զինծառայողի զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում՝ զինծառայողի ամուսինը, զավակը /զավակները/, ծնողը /ծնողները/ կամ Օրենքով սահմանված այլ անձինք.

3. Հաշիվներում առկա դրամական միջոցները հանդիսանում են բացառապես շահառու(ներ)ի սեփականությունը: Հաշիվներով հնարավոր է իրականացնել բացառապես Օրենքով սահմանված վճարների և Հաշվին հաշվեգրված տոկոսագումարների սպասարկումը:

4. Բանկը Հաշիվները բացում է և "Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման" Հիմնադրամից (այսուհետ՝ Հիմնադրամ) ստացվող դրամական միջոցները այդ Հաշվին մուտքագրում է Հիմնադրամի կողմից ներկայացված դիմումի և դրան կից շահառուների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա՝ դիմումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Բանկը սույն Հաշիվներում եղած դրամական միջոցները օգտագործելու համար տոկոսներ է վճարում շահառու(ներ)ին՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված վերաֆինանսավորման տարեկան տոկոսադրույքի չափով: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության դեպքում Բանկը շահառու(ներ)ին ծանուցում է տոկոսի չափի փոփոխության մասին, որն էլ ուժի մեջ է մտնում շահառուին ծանուցելուց 1 ամիս հետո: Սույն կետով նախատեսված տոկոսների գումարը մուտքագրվում է Հաշիվներին:

6. Յուրաքանչյուր եռամսյակի (հունիս, սեպտեմբեր, դեկտեմբեր, մարտ) վերջի դրությամբ, եթե վերաֆինանսավորման տոկոսադրույքը չի փոխվում, ապա հաջորդ եռամսյակի ընթացքում շարունակում է գործել նախորդ եռամսյակի ընթացքում գործող տոկոսադրույքը՝ մինչև տվյալ եռամսյակի վերջի դրությամբ տոկոսադրույքի փոփոխությունը:

7. Հաշիվները Բանկը սպասարկում է Հիմնադրամի հետ կնքված պայմանագրով սահմանված պայմաններով մինչև շահառու(ներ)ի կողմից Օրենքով սահմանված կարգով հատուցման ամբողջ գումարի ստացումը նաև պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կամ լուծելու դեպքերում:

8. Հիմնադրամի հետ կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունների սակագները սահմանվում են Սակագների «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված շահառուների բանկային հաշիվներե հոդվածով: